19 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003 ՈՒՐԲԱԹ 234(2919)

Azg

Azg armenian daily

Ադրբեջանում գործում է չեչեն գրոհայինների ֆինանսավորման ֆոնդ

ԳՐՈԶՆԻ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Չեչնիայում ձերբակալվել է մի բանդիտ, որը պնդում է, որ Ադրբեջանում գործում է գրոհայինների ֆինանսավորման ֆոնդ: Այս մասին հինգշաբթի հաղորդում է Newsru.com-ը՝ վկայակոչելով Տարածաշրջանային օպերատիվ շտաբը (ՏՕՇ): Շտաբի տվյալներով, այս տեղեկությունն ստացվել է նախօրեին ձերբակալված ոմն Ռիզվանի՝ գրոհայինների ֆինանսավորմանը մասնակից անօրինական զինված կազմավորումների գործուն անդամի հարցաքննությունից: Ձերբակալված գրոհայինը պնդում է, որ ներկայումս Բաքվում գործում է այսպես կոչված «Ասսալամ» իսլամական ֆոնդը, որը ֆինանսավորում է մի քանի բանդիտական խմբավորումների, որոնք գործում են Չեչնիայի Նոժայ-Յուրտի եւ Վեդենոյի շրջաններում: «Բացի այդ, ֆոնդը ֆինանսական օգնություն է ցույց տալիս Բաքվում ժամանակավորապես ապրող եւ բուժվող գրոհայիններին», հայտնել են ՏՕՇ-ում, վկայաբերելով ձերբակալված գրոհայիններ ի ցուցմունքները: Նրա տվյալներով, ֆոնդի ընդհանուր ղեկավարումն իրականացնում են ազգությամբ արաբ ոմն Աբու-Ռաբի եւ Հիմեթ: Ադրբեջանական ուժային կառույցները առայժմ չեն մեկնաբանել չեչեն գրոհայինի պնդումները:

Ընդհուպ համաճարակային վիճակ

Փակվեցին նաեւ մարզերի դպրոցները

Գրիպի նախահամաճարակային իրավիճակի պատճառով երեկ փակվեցին Երեւանի դպրոցներն ու մանկապարտեզները, իսկ այսօրվանից դրանք չեն գործի նաեւ մարզերում:

Առողջապահության նախարարությունից տեղեկացանք, որ երեկ երեկոյան տվյալներով գրիպով հիվանդ է բնակչության 18 տոկոսը: Գրիպի համաճարակ կհայտարարվի 20 տոկոս արձանագրելու դեպքում: Հանրապետությունում գրիպը եւ սուր շնչառական հիվանդությունները կանխելու նպատակով նախարար Վլադիմիր Դավիդյանը երեկ առողջապահության համակարգի ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների տնօրեններին հանձնարարել է մինչեւ փետրվարի մեկը տնային կանչերն ու այցերն իրականացնել անվճար բժշկական օգնությամբ: Անհրաժեշտության դեպքում հիվանդներին պետք է աղահովել մարդասիրական օգնությամբ ստացված եւ բուժհաստատություններին նախարարության տրամադրած, ինչպես նաեւ բուժհաստատությունների կենտրոնացված գնումներով ձեռք բերված դեղերով, ինչպես նաեւ բնակչության շրջանում կազմակերպել ակտիվ քարոզչություն՝ համաճարակի տարածումը, իսկ հիվանդանալու դեպքում՝ հնարավոր բարդությունները կանխելու նպատակով: Սահմանված ժամկետում կաղահովվի մասնագետ բժիշկների տնային այցելությունների փոխհատուցումը պետության կողմից, նաեւ կուժեղացվի հսկողությունը հակահամաճարակային միջոցառումների նկատմամբ:



Խորհուրդ է տրվում խուսափել գրիպով հիվանդների հետ շփվելուց, առաջին իսկ նշանների դեպքում՝ գլխացավ, կոկորդի ցավ, հազ, բարձր ջերմություն, ընդունել համապատասխան դեղամիջոց: Արգելվում է օգտագործել հակաբիոտիկներ:

Ռ. Պ.

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՈՌՔ ԽՄԲԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՄԲ

Հայոց ցեղասպանությունը ճանաչելու համաամերիկյան ակցիա

Մ. Նահանգներում ճանաչում ձեռք բերած System Of A Down ամերիկահայ հարդ-ռոք խումբը, որն այս տարի արժանացավ ամերիկյան «Գրեմմի» մրցանակին, երեկ կազմակերպել էր համաամերիկյան ակցիա՝ իր երկրպագուներին կոչ անելով դիմել Կոնգրեսին՝ ընդունելու Հայոց ցեղասպանությունը ճանաչելու բանաձեւ: Խմբի ղեկավար Սերժ Թանկյանը իրենց հարյուր հազարավոր երկրպագուներին ուղարկած նամակում նշել է, որ ապխարհում կատարված ոճրագործությունների հիմքում ընկած են կրոնական, ազգային խտրականությունները, կամ մշակութային խիստ տարբերությունները, որոնք գործածվում են իբրեւ պատճառ ու արդարացում ոչնչացնելու մարդկային հոծ զանգվածների: «Խնդրում եմ միացեք ինձ եւ խմբի մյուս անդամներին՝ Տարոնին, Շավոյին, Ջոնին ու բացիկներ ուղարկեք սենատորներին», ասել է նա: Խումբը Մ. Նահանգներում արդեն մի քանի տարի պայքարում է Հայոց ցեղասպանության ճանաչման համար եւ քանիցս կազմակերպել է նմանատիպ միջոցառումներ:

Հայաստանը «կիսաազատ» երկրների շարքում

Ամերիկյան «Ազատության տուն» կազմակերպությունը ԱՊՀ 5 երկրների բնորոշել է «կիսաազատ», որոնց մեջ է նաեւ Հայաստանը: Ուկրաինան, Ռուսաստանը, Վրաստանը եւ Մոլդովան նույնպես դասվել են «կիսաազատների» շարք: Հաշվի են առնվել այնպիսի գործոններ, ինչպիսիք են քաղաքական իրավունքները եւ քաղաքացիական ազատությունները՝ որոշելու համար երկրի այսպես ասած կարգավիճակը:

Հայաստանը, ինչպես Ուկրաինան եւ Վրաստանը, ստացել է 4 միավոր երկու պարամետրերում, Ռուսաստանը՝ 5, Մոլդովան՝ 3 քաղաքական իրավունքների եւ 4 միավոր՝ քաղաքացիական ազատությունների համար:

Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Ադրբեջանը, Ղազախստանը, Տաջիկստանը, Բելառուսը եւ Ղազախստանը համարվել են «ոչ ազատ» երկրներ: Այսինքն՝ Ադրբեջանը կորցրել է «կիսաազատ» երկրի կարգավիճակը, որն ուներ անցած տարի:

Ռ. Պ.

Իսրայելը հակամարտությունը լուծելու միակողմանի քայլեր է անելու

Երեկ գիշեր Իսրայելի վարչապետ Արիել Շարոնը կարեւոր ճառ արտասանեց՝ խոստանալով միակողմանի քայլեր կատարել պաղեստինցիների հետ հակամարտությունը կարգավորելու ուղղությամբ: «Քանի որ պաղեստինյան կողմը որեւէ քայլ չի կատարում խաղաղության «ուղեցույցը» գործադրելու ուղղությամբ, ապա Իսրայելի կառավարությունը որոշել է միակողմանի քայլերով իրականացնել այն», ասաց Շարոնը: Այդ քայլերից մեկը կլինի պաղեստինյան հողատարածքների վրա իսրայելցի վերաբնակների վերջերս կառուցած բնակավայրերը կազմաքանդելը: Մեկ ուրիշ քայլ կլինի իսրայելական զորքը պաղեստինյան որոշ տարածքներից եւ առաջին հերթին՝ խիտ բնակչությամբ շրջաններից հեռացնելը:

Ուշագրավ է, որ ճառն արտասանելուց 2 ժամ առաջ Արիել Շարոնի գրասենյակը տեխտն ուղարկել էր Մ. Նահանգների նախագահական գրասենյակ:

Պաղեստինյան կողմը Շարոնի ճառն ընդունեց բացասաբար: Բնակեցումների կազմաքանդման վերաբերյալ նրանք պնդում են, որ դա ոչ թե կազմաքանդում, այլ դրանց փոխադրումն է պաղեստինյան այլ վայրեր: Ինչ վերաբերում է պաղեստինյան մեծ բնակավայրերից զորքը հեռացնելուն, պաղեստինցիները դեմ են նաեւ դրան՝ ասելով, որ Իսրայելը դրանով փաստորեն Պաղեստինի իրեն հարմար սահմաններն է գծում ու փորձում դրանք ամրագրել:

Մկսվում է 48 կին սպանած հանցագործի դատը

Այսօր Մ. Նահանգներում սկսվում է երկրի պատմության մեջ ամենահայտնի սերիական սպանությունների հեղինակի դատավարությունը: Հանցագործը կոչվում է Գարրի Ռեջուել: Մինչեւ ձերբակալվելը մամուլը նրան անվանում էր «Գրին գետի մարդասպանը»: 1982 թ.-ից ի վեր ոճրագործը սպանել է 48 կին, գրեթե բոլորն էլ պոռնիկներ, որոնց հետ գործ ունենալուց հետո մարդասպանը նրանց դանակով սպանել եւ մարմինները թաքցրել է գետեզերքի անտառներում:

«Մոսկվան Բաքվին խոստացել է վերադարձնել 2-3 շրջան»

ԲԱՔՈՒ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Ադրբեջանական «Էխո» թերթում տպագրված ԼՂ-ի խնդրին առնչվող հարցազրույցում Ադրբեջանի պատգամավորության նախարարության իր անունը չհայտնած մի պատգամավոր տեղեկացրել է, որ հաջորդ տարվա առաջին կեսին ԼՂ հակամարտության լուծման ուղղությամբ որոշակի առաջընթաց կլինի: «Բարձր մակարդակի զրույցի ընթացքում ինձ հայտնի դարձավ, որ Մոսկվան այժմ Ադրբեջանին առաջարկում է հրաժարվել ՆԱՏՕ-ի շարժական ռազմակայանները Բաքվում տեղակայելու մտադրությունից, ինչի դիմաց Բաքվին խոստանում է խաղաղ ճանապարհով վերադարձնել երկու-երեք օկուպացված շրջաններ: Խոսքը մասնավորապես Ֆիզուլիի եւ Կուբաթլիի մասին է: Այս ուղղությամբ այժմ ռուսական կողմը շատ լուրջ աշխատանքներ է տանում»,- նշել է պատգամավորը: Ըստ նրա, արդեն իսկ հունվարին ամենայն հավանականությամբ կկայանա Իլհամ Ալիեւի եւ Վլադիմիր Պուտինի պատգամավորական հանդիպումը, որից հետո ԼՂ խնդրի շուրջ լուրջ փոփոխություններ կլինեն: Հունվարին Իլհամ Ալիեւը պետք է կամ ընդունի կամ մերժի Ռուսաստանի առաջարկը: Նույն աղբյուրը տեղեկացրեց, որ հենց այդ խնդիրն է Հեյդար Ալիեւի հուղարկավորությանը մասնակցելու նպատակով Բաքու ժամանած Վլադիմիր Պուտինը քննարկել Իլհամ Ալիեւի հետ: Նրանց դռնփակ առանձնազրույցը տեւել է մոտ կես ժամ:

Ամերիկացի առաջին զոհը Սադդամի ձերբակալությունից հետո

Իրաքում երեկ նորից ամերիկացի զինվոր սպանվեց: Անցյալ շաբաթ օրը Սադդամ Հուսեյնի ձերբակալությունից հետո սա ամերիկացիների դեմ ուղղված հարձակումներից առաջինն է, որ ամերիկացի զոհ է խլում: Բացի զոհված զինվորից, Բաղդադում կատարված միեւնույն հարձակմանը զոհվել է նաեւ իրաքցի մի թարգմանիչ, վիրավորվել է եւս մի զինվոր:

Սրանով իրաքյան պատերազմի սկզբից ի վեր սպանված ամերիկացիների թիվը հասավ 450-ի, որոնցից 314-ը՝ բնակչական կրակից:

Մյուս կողմից, ամերիկյան աղբյուրների տվյալներով, Սադդամ Հուսեյնի ձերբակալությունից հետո բարձրացել է իրաքյան կազմավորվող նոր բանակում ծառայության անցնելու դիմորդների թիվը, ինչը նշանակում է, որ իրաքցիներից շատերի համար Սադդամի ձերբակալությունն անցյալի հետ կապերը խզելու ազդանշան է եղել:

Իրանը ստորագրեց միջուկային ստուգումների համաձայնագիրը

Երեկ Վիեննայում Իրանի Իսլամական Հանրապետության ներկայացուցիչը ստորագրեց ՄԱԿ-ի միջուկային վերահսկողության գործակալության հետ համաձայնագիրը, որը միջազգային տեսուչներին հնարավորություն է տալիս որեւէ պահի Իրանում ստուգումներ կատարելու:

Հակառակ 18 ամիս առաջ արտահայտված իրանյան ընդդիմադիր շրջանակների կատարած պնդումներին, թե Իրանը ռազմական նպատակներով միջուկային տեխնոլոգիաներ զարգացնելու աշխատանքներ է տանում, Թեհրանը միշտ էլ հերքել է միջուկային զենքի տիրանալու մասին ամերիկյան մեղադրանքները:

ՌԵՊՈՐԹԱԺ

Ի՞նչ արժեն այս տարի տոնածառերը

Արդեն երկու օր է, ինչ Երեւանի փողոցներում հայտնվել են բնական եւ արհեստական տոնածառեր: Իսկ թե ի՞նչ արժեն դրանք, ավելի լավ է չհարցնեք, քանզի զայրացած կհեռանաք:

Կորյունի փողոցում (Մաշտոցի մոտ) արհեստական տոնածառերի գները 55 հազարից են սկսվում, այդքան արժե 50 սմ-անոցը, մինչդեռ 1 մ 20 սմ-անոցը՝ 180 հազար դրամ... այսպես գներն աճում են ամեն սմ-ի համար: Իսկ Նոր Նորքի զանգվածի շուկայի տարածքում Վրաստանից բերված բնական տոնածառերի գներն սկսվում են 5 հազար դրամից՝ հասնելով 80 հազարի:

Ո՞ւմ համար են այդ թանկարժեք տոնածառերը: Պարզ է: Իսկ ի՞նչ պատասխանես քո երեխաներին ու թոռներին, երբ նրանք էլ են ուզում Ամանորին տոնածառ ունենալ, բայց դու այդ հնարավորությունը չունես: Մնում է մի բան, երգել՝ չունենք անգամ տոնածառ...



ՄԱՐԻԵՏԱ ՄԱՍԱՐՅԱՆ

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի նորանշանակ դեսպան Վլադիմիր Պրյախինը երեկ մամլո ասուլիս էր հրավիրել ամերիկյան համալսարանի բիզնես կենտրոնում: Լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ սա նրա առաջին հանդիպումն էր, որի ժամանակ ամփոփվեց անցնող տարվա գործունեությունը եւ ներկայացվեցին գալիք տարվա գլխավոր ծրագրերը:

Դեսպան Պրյախինը պարտավորությունները սանձնել է հոկտեմբերի 20-ից: Նախիջեւանում ծնված, Բաքվում մեծացած, Ռուսաստանում կրթված եւ Աֆրիկայում հակամարտության խնդրին առնչված եւ վերջապես Վիեննայում եվրոպական երկրների համագործակցության հարցերով զբաղված պրն Պրյախինը բավականին ջերմ ու լավատեսական վերաբերմունք ունի մեր երկրի նկատմամբ: Նրա խոսքով, այսօր առկա են բոլոր հնարավորությունները Հայաստանում ներդրումային դաշտն ընդլայնելու համար, եւ իբրեւ առաջնայ նշեց, որ մեր երկիրն Իսրայելից հետո երկրորդն է, որին Մ. Նահանգները զգալի օգնություն է հատկացնում: Այլ խնդիր է, որ արձանագրված տնտեսական աճը առայժմ չի մեղմացնում խորացող սոցիալական լարվածությունը, գրեթե չի նկատվում ժողովրդի կենսամակարդակի բարձրացում: Հենց այս իրավիճակն էլ պարտադրում է լուրջ քայլեր մանր եւ միջին ձեռնարկությունների զարգացման համար, որով միայն հնարավոր կլինի ձեւավորել Խորհրդային Միության փլուզումից հետո վերացած միջին խավը: Նրա համոզմամբ, միջին խավի կորուստը ամենամեծ հարվածն էր ԱՊՀ երկրներին, եւ առ այսօր զգում ենք դրա պատճառած բացասական խորը ազդեցությունը:

Ներդրումային բարենպաստ միջավայր ստեղծելու առաջնային նախապայմանը նա համարեց հակակոռուպցիոն խիստ քաղաքականությունը: Կոռուպցիայի դեմ պայքարը Հայաստանի կառավարության առջեւ դրված է որպես առաջնային խնդիր, մշակվել է ազգային ռազմավարություն, որի հասարակական լայն քննարկումը առաջիկայում կկազմակերպվի գրասենյակի նախաձեռնությամբ: Դեսպանն ընդգծեց, որ հանդես կգան փոքր եւ միջին ձեռնարկությունների զարգացման ծրագրերով, կօժանդակեն իշխանություններին դրանք իրականացնելու: Հենց այդ նպատակով կստեղծվեն տեղեկատվական եւ վերլուծական կենտրոններ հանրապետության ողջ տարածքում: «Հայաստանում մտավոր մեծ ներուժ կա, որն անպայման պիտի օգտագործվի», ասաց նա: Այնպես որ, իրենք նախատեսում են իրականացնել տնտեսական, նաեւ էկոլոգիական լայնածավալ ծրագրեր:

Ունենք բոլոր հնարավորությունները ներդրումային կայուն միջավայրի համար

Խանգարում են կոռուպցիոն խնդիրները

Լրագրողներին հետաքրքրում էր, թե ի՞նչ կարծիք ունի դեսպանը մեր երկրում խոսքի ազատության մասին: Դեսպանը ժպիտով հիշեց, որ ինքն էլ է լրագրող եղել եւ մեզանում որեւէ արգելք չի տեսնում լրատվամիջոցների համար: Իր տպավորությամբ, ամեն ոք ասում է այն, ինչ կամենում է, եւ որեւէ սահմանափակում կարծես չկա: Իրենք հետեւում են հեռարձակման հաճախականությունների բաշխմանը, մասնավորապես Ա1+-ի եւ «Նոյյան տապանի» հետ կապված դեպքերին: Նախատեսվում է լրատվամիջոցների իրավիճակի մոնիտորինգ, սակայն խնդրի լուծման համար ամենից առաջ պետք է հաճախականությունների բաշխելու թափանցիկությունը ապահովող մեխանիզմներ այնքան էլ հուսահատեցնող չէ, որովհետեւ, ըստ դեսպանի, ամեն ինչ պետք է դիտել համեմատության մեջ: Ի տարբերություն հարեւան երկրների, Հայաստանում պահպանվեց պետական կայունությունը, խաղաղ ճանապարհով կանխվեցին ամբողջատիրական ձգտումները: Դեմոկրատացումն ընթանում է ճիշտ ճանապարհով, միայն անհրաժեշտ են սահմանադրական եւ օրենսդրական փոփոխություններ:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ հարցին նա պատասխանեց, որ իր ուսումնասիրած հակամարտություններից վերջինս բավականին տարբեր է հատկապես հակադրություններով, եւ հենց դրանով են պայմանավորված խնդրի լուծման մեխանիզմները գտնելու դժվարությունները:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Խուլերին նույնպես հիշում են միայն ընտրությունների ժամանակ

Լրացավ Հայաստանի խուլերի միավորման 70-ամյակը: 70-ամյակին նվիրված արարողությունը տեղի ունեցավ 2003 թ. հոկտեմբերի 31-ին Հայաստանի խուլերի միավորման մշակույթի եւ սպորտի հանրապետական պալատում: Հրավիրվել էին Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Բելառուսի, Մոլդովայի, Լեռնային Ղարաբաղի խուլերի միավորման ներկայացուցիչները, ինչպես նաեւ հանրապետության ղեկավար մարմիններից: Ցավոք, ինչպես միշտ, տեղի ղեկավարներից ոչ մեկը չէր ներկայացել: Խուլերին հիշում են միայն ընտրություններից ընտրություն:

Հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող վարչության պետ Ցեմմա Բաղդասարյանն ընթերցեց սոցպաշտպանության նախարարի ուղերձը, որից հետո ելույթ ունեցավ Կենտրոն համայնքի համայնքապետ Գագիկ Բեգլարյանը:

Ինձ բախտ էր վիճակվել լինել այն հրավիրյալների կազմում, որոնք մասնակցեցին Ուկրաինայի խուլերի միավորման 70-ամյա հոբելյանին: Այն տեղի ունեցավ Կիեւի Դանկոյի անվան ֆիլհարմոնիայի շենքում: Ես նախանձով էի նայում առաջին շարքում նստած կառավարության, քաղաքապետարանի եւ այլ նախարարությունների պատգամավորներին, որոնք եկել էին հարգելու, շնորհավորելու եւ բարեմաղթանքներ ուղղելու իրենց խուլ հայրենակիցներին: Այդ կապակցությամբ Ուկրաինայի Հանրապետության նախագահի հրամանով խուլերի միավորման նախագահ Յուրի Պետրովիչ Մաֆսիմենկոն պարգեւատրվեց ծառայության համար 3-րդ կարգի մեդալով, ինչպես նաեւ Ուկրաինայի Ռադայի պատվոգրով:

Նախագահը 2 խուլի պարգեւատրեց նաեւ «Աշխատանքի եւ հաղթանակի համար» մեդալով:

Ուկրաինայի սոցիալական համակարգում վաստակավոր աշխատողի պատվավոր կոչում է շնորհվել 1 անձի: Ուկրաինայի արդյունաբերության աշխատողի վաստակավոր կոչում է շնորհվել 1 հոգու, 5 հոգի պարգեւատրվել են նախագահի պատվոգրերով, 2 հոգի՝ Ռադայի պատվոգրով: Ուկրաինայի խուլերի միավորումը պարգեւատրվել է նախարարների խորհրդի պատվոգրով եւ հուշանվերով, 7 հոգի՝ տարբեր պատվոգրերով եւ հուշամեդալներով:

Ուկրաինայի խուլերի միավորման 70-ամյակի կապակցությամբ նախարարների խորհուրդը միավորմանը հատկացրել է 1 մլն գրիվեն (188.700 դոլար)՝ միավորման զարգացման եւ առկա խնդիրները լուծելու համար:

ԺՈՐԱ ՎԱՐԱԳՅԱՆ
ՀՀ խուլերի միավորման նախագահության նախագահ

Ի ՀՈՒՇ

Սգո արարողություն Հրանտ Մաթեւոսյանի հիրմի մոտ

Մահվան առաջին տարելիցի կապակցությամբ

ԵՐԵՎԱՆ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Այսօր, արձակագիր Հրանտ Մաթեւոսյանի մահվան առաջին տարելիցի օրը, հանրապետության գրական հասարակայնությունն այցելեց Կոմիտասի անվան գբոսայգու Պանթեոնում ամփոփված՝ հայ գրականության դասական դարձած ներկայացուցչի հիրմին:

Արարատյան հայրապետական թեմի քահանայից խմբի կատարած հոգեհանգստյան արարողությունից հետո, ներկաների առջեւ հանդես եկավ Հայաստանի գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը, որի խոսքերը հնչեցին իբրեւ մենախոսություն՝ ուղղված նշանավոր արձակագրին ու գրողների միության նախկին նախագահին. «Դու եկար, ինչպես ինքդ էիր ասում, «կրկնելու Օհաննեսի փորձը գրականության մեջ», բայց քո համարձակությունն ապրեցիր, եկար ապրելու մահկանացուի քո կյանքը, սակայն թեզնով ուրիշներին ապրեցրիր...Քո ստեղծագործություններում բախվեցին ու հայի աչքով չափանշվեցին բազմազգ մշակույթները, եւ տարբեր լեզուներով խոսեց քո գրականությունը իբրեւ մեր բազմադարյա մշակույթի հավասարարժեք վկայաբանող»:

Հրանտ Մաթեւոսյանի մասին խոսք ասացին բանասիրության դոկտոր, արձակագիր Նորայր Ադալյանը, բանաստեղծ Հրաչյա Սարուխանը, արձակագիր Արտակ Վարդազարյանը, քանդակագործ Լեւոն Թոքմաջյանը, որը կերտել է Հրանտ Մաթեւոսյանի հիրմաքանդակը (պատվանդանը՝ ճարտարապետ Համլետ Խաչատրյանի): Բազալտե մահարձանը, որ մարմարյա պատվանդանին է տեղադրվել մի քանի օր առաջ, ունի մոտ 3 մետր բարձրություն:

Հրանտ Մաթեւոսյանը ծնվել է 1935 թվականին, Ալավերդու շրջանի Ահնիձոր գյուղում, բարձրագույն կրթություն է ստացել Երեւանում, սցենարիստի ուսում է առել Մոսկվայում: Երեւանում աշխատել է որպես տպարանի վարպետ-լինոտիպիստ, սրբագրիչ: Ընթերցողին հայտնի են նրա «Ահնիձոր» վիպակը, «Օգոստոս», «Մենք ենք, մեր սարերը», «Ծառերը», «Տերը» եւ այլ ժողովածուներ: Նրա ստեղծագործությունների հիման վրա նկարահանվել եւ բեմադրվել են կինոնկարներ եւ թատերական ներկայացումներ:

Հ. Մաթեւոսյանի ստեղծագործությունները թարգմանվել են ռուսերեն, լիտվերեն, մոլդավերեն, էստոներեն, վրացերեն, ղազախերեն, կիրգիզերեն, գերմաներեն, ուկրաիներեն, չեխերեն, անգլերեն, հունգարերեն, նորվեգերեն, բուլղարերեն եւ աշխարհի այլ ժողովուրդների լեզուներով: Նա ԽՍՀՄ եւ ՀԽՍՀ պետական մրցանակների դափնեկիր էր, ՀՀ առաջին գումարման Գերագույն Խորհրդի պատգամավոր:

ԳՅՈՒՄՐԻ

Անհեթեթություն անհեթեթությանց

Կամ՝ գրադարանը ... գրապահոցում

Որ գրապահոց կոչվածը բոլոր դեպքերում գրադարան-ամբողջի մաս է կազմում՝ հայտնի է անգամ երեխային: Իսկ կարո՞ղ է պատահել հակառակը, որ գրադարանն ինքը տեղավորված լինի գրապահոցի մեջ: Գյումրի քաղաքի գլխավոր գրադարանի օրինակը վկայում է, որ խնդիրը վճռող մեր նորօրյա ղեկավար պաշտոնյաների հանճարեղ մտածողության պայմաններում՝ նույնիսկ նման անպարարությունը հասարակ բան է: Այդպիսի իրավիճակում քաղաքի երբեմնի կարեւորագույն գրամշակութային օջախը հայտնվել է 1997 թվականից:

Ավետիք Իսահակյանի անվան նախկին քաղաքային կենտրոնական գրադարանը, որ 1997-ին վերակոչվեց Շիրակի մարզի հանրապետական, իսկ այս տարվանից կոչվում է Շիրակի մարզային գրադարան, նշված ժամանակվանից հարկադրաբար տեղավորված է նախկին Թբիլիսյան խճուղի, ներկայիս Խրիմյան Հայրիկ 56 հասցեն կրող շենքի բացվածքներից մեկում իրեն որպես գրապահոց տրամադրված տարածքում: Ու որքան էլ այստեղ աշխատողներից շատերն այդ գործի երկար տարիների նվիրյալներ են, այդ պայմաններում գրադարանային քիչ թե շատ որակյալ (էլ չենք ասում ժամանակակից) սպասարկման հնարավորության մասին խոսելն իսկ ավելորդ է:

Գրադարանի նախկին՝ քաղաքի կենտրոնում գտնվող ավանդաշատ շենքը հետերկրաշարժյան խառը տարիներին քաղաքապետարանի որոշմամբ հանձնվել էր Շիրակի թեմին եւ Համաշխարհային բանկի վարկով նորոգվելուց հետո վերաբացվեց որպես առաջնորդարան՝ դուրս թողնելով գրադարանին: Դա դժգոհություն ու բավական աղմուկ հարուցեց քաղաքի մտավորականության շրջանում, եւ իշխանությունները շտապեցին հավաստիացնել, թե գրադարանի համար նոր, ավելի հարմար շենք գտնելու հարցը կարճ ժամանակում կլուծվի, կան քննարկվող տարբերակներ: Աշխատողները ժամանակավոր տեղավորվեցին նաստրաբաց գրապահոցի ծածկի տակ, նոր շենքի մասին խոսակցությունները հետզհետե մարեցին եւ արդեն վաղուց մոռացվել են: Դե, հիմա ո՞ր գիրք կարդացողն է կյանքում առաջ գնում որ...

Իսկ ներկա տարածքում առկա պայմանները հեռու են նույնիսկ գրապահոցի պահանջները բավարարելուց: Ավելի քան 300 հազար միավորով գրքային ֆոնդի զգալի մասը պահվում է պարզապես կապոցներով: Չկա բավարար լուսավորվածություն, ծմռանը՝ ջեռուցում, ինչն անհնար է դարձնում ֆոնդերի նորմալ պահպանությունը: Գրադարանի բաժինները տարանջատված են... գրադարակների շարքերով: Էլ ի՞նչ ընթերցասրահ, էլ ի՞նչ ընթերցողի եւ հենց աշխատողների համար պայմաններ: Չկա գրադարանային ֆոնդերի նպատակային համալրում, դրանց փոխօգտագործում: Չկա պետական հոգածություն:

Հանրապետության երկրորդ մեծ քաղաքում էլ կա մտավորականություն, ուսանողություն, կան գիտական (ակադեմիական) հաստատություններ ու ոչ փոքր թվով գիտաշխատողներ, որոնք ամեն օր գրադարանի, գրքի ու գրականության կարիք ունեն: Վերջապես վերադարձրեք նրանց այդ հնարավորությունը:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

Ուղղում

«Ազգի» երեկվա համարի մշակույթի էջում (էջ 6) լույս տեսած Սվետլանա Սարգսյանի հոդվածի վերնագիրը՝ «Արարման արվեստը Բորոդինի հայացքով» սխալ է: Այն պետք է կարդալ՝ «Արարման արվեստը Բորոդինի քառյակում»:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության թիվ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենյակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայություն
/ հեռ. 582483
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական կամ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսությամբ, առանց խմբագրության գրաւոր համաձայնության, խստիւ արգելւում են, համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԸՍԹԱՑԻԿ

«Հայաստանն 9-րդն է աշխարհում աղամանդագործության բնագավառում»

Նշեց առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարը

Կառավարության հաստատած աղամանդագործության 2004-2006 թթ. զարգացման ծրագիրը երեկ ներկայացրեց առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարար Կարեն Ճշմարիտյանը: Նա նշեց, որ ծրագրի մշակումն ու ընդունումը պայմանավորված են երկու հանգամանքով: Առաջինը, որ այս ոլորտը 1997 թ.-ից ի վեր մեծ զարգացում է ապրել, երկրորդը, որ համաշխարհային շուկայում մեծ փոփոխություններ են արձանագրվել: Այսինքն, առաջացել են լուծման կարիք ունեցող խնդիրներ:

Այնուհետեւ Կարեն Ճշմարիտյանը ներկայացրեց ոլորտում վերջին 5 տարիների վիճակը եւ առաջիկա տարիներին նախատեսվող ցուցանիշները: 1997 թ.-ին աղամանդագործական արտադրանքի արտահանումը կազմել է մոտ 24 մլն դոլար, 2002 թ.-ին ավելի քան 200 մլն դոլար: Այսինքն 9 անգամ ավելի: Զբաղվածության ցուցանիշը 1300 աշխատատեղից հասել է 7000-ի: Հայաստանն այս ոլորտում աշխարհի 9-րդ երկիրն է: Ձեռնարկությունների թիվը 1997 թ.-ին եղել է 5-ը, ներկայումս հասել է 50-ի:

Ծրագրվում է արտադրողականությունը հասցնել 500 մլն դոլարի /400 մլն դոլարը աղամանդագործության, 100 մլն դոլարը ոսկերչության բնագավառներում/, աշխատակիցների թիվը ավելացնել 10 հազարով, միջին աշխատավարձը հասցնել 200 դոլարի:

Ինչպես նշեց նախարարը, համաշխարհային շուկայում առկա է աղամանդագործական արտադրանքի պահանջարկի ավելացման միտումը, եւ Հայաստանը կարող է ընդլայնել իր տեղն այստեղ: **«Ազգի»** հարցն ուղղված Կարեն Ճշմարիտյանին, առնչվում էր ոլորտում միջին աշխատավարձի ներկա չափին եւ պետության կողմից այս հարցում ազդելու հնարավորությանը: Օրինակ, Թալինի «Դայմոքեմ» ընկերությունում աշխատավարձի չափը չի գերազանցում 20-25 հզ. դրամը: Նախարարը պատասխանեց, որ միջին աշխատավարձը ներկայումս կազմում է 70-75 հզ. դրամ, իսկ պետությունը դրա բարձրացմանը նպաստելու է աշխատողների որակավորման բարձրացման եւ այլ միջոցառումներով: «Խնդիրը որակյալ մասնագետների քանակի ավելացումն է», նշեց նա: Սակայն կարեւոր մեկ հանգամանքի նախարարը «մոռացավ» անդրադառնալ: Մինչ ձեռնարկության մասնավորեցումը, դրա ներկայիս սեփականատեր ընկերությունը որոշակի պարտավորություններ էր ստանձնում այդ թվում նաեւ միջին աշխատավարձի չափի վերաբերյալ: Մասնավորապես խոսքը Նոր Հաճընի «Շողակն» ձեռնարկության մասին է, որտեղ, սակայն, կոնկրետ աշխատավարձի գծով պարտավորությունները իրականություն չեն դարձել: Կառավարության պարտականությունն է դրանց կատարմանը հետեւելը:

Ոլորտի զարգացման եւս մեկ կարեւոր դրույթին անդրադարձավ նախարարության աղամանդագործության վարչության պետ Գագիկ Մկրտչյանը: Նա հայտնեց, որ նպատակ է դրված բարձրացնել ավելացված արժեքի չափը, որը ներկայումս կազմում է 10-12 տոկոս:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

878 միլիոն դրամ սպորտին

Եկող տարի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացման համար կառավարության տրամադրած գումարը կկազմի մոտ 878 մլն դրամ: Այն կուղղվի ուսումնամարզական հավաքների, ներքին առաջնությունների կազմակերպմանը, մեր հավաքականների մասնակցությանը Եվրոպայի եւ աշխարհի առաջնություններին, օլիմպիական խաղերին, դրանցում հաջողություններ արձանագրած մարզիկների խրախուսմանը, հանդերձանքի, գույքի ձեռքբերմանը եւ այլ միջոցառումներին: Տեղեկացնելով այս մասին, ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանը նշեց օրինակ, որ աշխարհի կամ Եվրոպայի չեմպիոն եւ մրցանակակիր դարձածների խրախուսման համար կհատկացվի 100 մլն դրամ, իսկ 17 եւ 19 տարեկան ֆուտբոլի հավաքականներին հեռագա մրցելույթների մասնակցության նպատակով պետբյուջեից կտրվի 60 մլն դրամ:

Ա. Մ.

Խեղճության վազքը

Չյան հետ սովորաբար մոայլությունը հոգսի տեսքով վրա է տալիս: Ճար չկա, պիտի դիմանաս հերթական ծմռան փորձությանը (կամ էլ չդիմանաս):

Կյանքը, ասում են, իբր լավացել է: Երեւանի կենտրոնում լուսավորվածությունը լավացել է: Նոր տարվա խաբուսիկ փայլերը գայթակղիչ են թվում՝ փոքրիկ հույսի մշուշով: Մեքենաները գնալով շատանում են, բանուկ փողոցների երթեւեկը դարձնում հաճախ անհնար: Մի բութ ծաղրանքով մեքենաների շատանալուն պես քաղաքի մուրացկաններն էլ շատանում են, նոր ձեւ ու կերպարանք առնում: Առանց մուրացկանին բնորոշ կեցվածք ընդունելու, երեկոները տներից դուրս են գալիս «չճշտված» (տեսակի առումով) կանայք եւ անցորդների հագ ու կաղը տնտղելով՝ մոտենում. «Տուն հասնելու 100 դրամ կտա՞ք» ասելով: (Սա նոր ձեւ է, մի ժամանակ երեխաներին էին ուղարկում):

Նոր տարվա հայկական եռուզեռը դեռ նկատելի չէ: Շուտով կսկսվի կերուխումի սեղանային մրցավազքը: Առեւտրասեղաններին իրենց վերջին կոտրելը գցելով՝ կանայք եղունգները կրծոտելով կհաշվեն ամանորյա ծախսերն ու վրահաս թանկացումների սեղմող ծանրության տակ կմտածեն՝ հարամ է, էլի: Դե արի ու շնորհավորի հարազատներիդ կամ սիրտդ բացի հեռախոսով, ի՞նչ ենք անելու: Էս «Արմենտելը» կրակ ու պատիժ դարձավ գլխներիս»:

Սարդոսայնի մեջ ընկած ճանճի կամ թակարդն ընկած ձկան պես թպրտալու ենք անհուսությունից...

Այսպես է, երբ Նոր տարին գալիս է՝ ժամանակի պայմանական թե խորհրդանշական սահմանագիծ իբրեւ, չգիտես՝ ուրախանաս, թե լաս: Ամեն անցնող օրվա ու տարվա հետ մոտենում ենք մեր վերջին: Բայց դարձյալ զանգեր ենք կախում, հույսեր ծորում: Լավ կլինի՝ Նոր տարվա սեթեւեթ ժամերին չտրվենք՝ շարունակվող 365 կամ 366 օրերի մեջ չխճճվելու համար, ինչ իմանաս ժամանակի այդ օղակում քեզ ինչ է պատահելու: Բարին արարենք, որ բարին ստանանք. ասում են կյանքը բումերանգ է՝ պատճառահետեւանքային կապով:

Հետո ասում են՝ կյանքը լավացել է: Մեքենանե՞րն են շատացել, թե՞ փողոցներն են բարեկարգվել, փո՞ղն է շատացել, թե՞ կարեկցանքն ու բարությունը: «Ասում են՝ կյանքը լավացել է», հարցնում եմ փողոցի երկայնքով ծգվող ձյան տակ առեւտրով հանապազօրյա հացը վաստակող մարդկանց: «Գրող է արել, ո՞ւմ համար է լավացել»:

Կյանքի մերկ պատերին խվողների համար կյանքը չի լավացել: Երեկոյան մինչեւ ժամը 9-ը մետրոյի աստիճաններին կուչ եկած, ձեռքերն իր բույլ շնչերին կուչ եկած, արդեն 4-5 տարի կիսչով տաքացնող, արդեն 4-5 տարի կիսրոն վաճառող կնոջ համար կյանքը գնալով դժոխք է դառնում, երբ ուր ժամին ծնկները դողդողացնելով, հազիվ ոտքի է կանգնում փոքրիկ աթոռակի վրայից ու տասը տակ փաթաթված բրդյա հնոտիներից ազատվելով՝ օ՞ֆ քաշում: Փողոցի մեքենաների փայլուն ապակիներից իր հոգսը չի թեքեւանում, երբ հարցնում ես, թե ինչո՞ւ է միշտ այսքան ուշ ժամի գալիս, ասում է՝ այս ժամերին տեղի 200 դրամ վարձը չեմ տալիս: Ու սառեցնում է մարմինը, ամեն օր կապած տուն գնում: «Բա սա կյա՞նք է, ասում է մետրոյի անցումում առեւտրասեղաններից մեկի մոտ կանգնած կապուտաչյա, սիրունատես կինը: Զզվել, հոգնել ենք այս բեռից: Բա ես կի՞ն եմ՝ առավոտից իրիկուն բոշի պես փողոցում կանգնած»: «Ի՞նչ ես վաստակում»: «Վաստակո՞ւմ, վրա է բերում ջղայնոտ, շուկան երկու խուլիգանի ձեռին է, անխիղճ թալանչիներ են: Վառածս էս մի լամպն է, ասում են 4.000 դրամ պիտի տաս դրա համար, 30.000՝ տեղի համար, 9.000՝ պահեստի: Կանաչի ու միրգ եմ վաճառում: Տակն ինչ է մնում: Ամբողջ փողն իրենց գրպանն է հոսում, ինչ մուծում, ինչ պետքյուջե»:

«Իմն է, տերը ես եմ, ինչ ուզեմ՝ կանեմ», իշխող մտայնությունը սա է: Կամայականություն է: Ճանապարհ է, պիտի անցնես, զգուշավորությունս ո՞րն է: Ինչպես կարող ես անցիր, մտածելու համար ժամանակը սուղ է, որովհետեւ Նոր տարի է գալիս, վազք է: Բայց մի պահ կանգ առնենք մտածելու՝ անցողիկ կյանք է, աշխարհը հո հետներս չենք տանելու:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՕՊԵՐԱՏԻՎ ՏՎՅԱԼՆԵՐ

Ուժեղ քամին Գեղարքունիքում քանդել-տարել է 16 բնակելի շենքերի տանիքներ

Ինչպես տեղեկացանք արտակարգ իրավիճակների վարչության լրատվական կենտրոնի տեղեկագրից, դեկտեմբերի 16-ին, երեկոյան 19.00-ի սահմաններում Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում ուժեղ քամին վնասել է մոտ 16 բնակելի շենքերի տանիքներ: Պոկվել են նաեւ Գավառ քաղաքի Դաշտոյան փողոցի թիվ 3՝ բնակիչ Ռաֆիկ Գաբոյանի տան տանիքը եւ թիվ 5 միջնակարգ դպրոցի տանիքի մի մասը:

Սպանությունը բացահայտվեց

ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչությունից տեղեկացանք, որ դեկտեմբերի 15-ին ոստիկանության Գյումրու բաժին հիվանդանոցից հաղորդվել էր, որ նույն օրը որովայնի մասում ստացած կոտորակային վնասվածքով իրենց մոտ է տեղափոխվել 1979 թ.-ին ծնված, նախկինում դատված Լեւոն Սարգսյանը: Վերջինս վիրահատության ժամանակ մահացել է: Դեկտեմբերի 17-ին սպանություն կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել Արսյոմ Հարությունյանը: Պարզվել է, որ Լեւոն Սարգսյանին դեկտեմբերի 15-ին ՏՈՉ-34 տիպի հրացանից կրակել եւ սպանել է 1976 թ.-ին ծնված Արսյոմ Հարությունյանը: Վերջինս ձերբակալված է, հրացանն առգրավված է:

Անզգույշ կրակոցը կդավ սեփական կնոջը

Դեկտեմբերի 17-ին ոստիկանության Արտաշատի բաժին հիվանդանոցից հաղորդվել էր, որ ազդրի մասում ստացած հրազենային վնասվածքով իրենց մոտ է տեղափոխվել Ա. Վ.-ն: Մեկնած օպերատիվ խումբը պարզել է, որ նույն օրը վերջինիս ամուսինը՝ Ս. Խաչատրյանը, իրեն պատկանող ՏՈՉ-63 տիպի երկփողանի որսորդական հրացանից անզգուշաբար կրակել եւ վնասվածք է հասցրել Ա. Վ.-ին՝ կնոջը: Հրացանն առգրավված է, կատարվում է նախաքննություն:

Դեկտեմբերի 18-ին հանրապետությունում ձերբակալվել են ՀՀ քր. օրենսգրքի տարբեր հոդվածների հատկանիշներով հետախուզվող 4 անձինք, այդ թվում՝ գողության եւ ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելու համար:

Երեկ հանրապետությունում գրանցվել է 3 ճանապարհատրանսպորտային պատահար, 7 մարդ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց: Արձանագրվել է նաեւ վառերքի մեկ դեպք, որի հետեւանքով մեկ մարդ ստացել է մարմնական վնասվածքներ:

Լուսաղը՝ ՄԱՔԻԵՏԱ ՄԱՂԱԲՅԱՆԻ

Մարդկանց առեւտրի դեմ պայքարի թեմայով սեմինարը մեկնարկեց

Երեկ կառավարության ընդունելությունների տանը երկօրյա աշխատանքային սեմինար սկսվեց՝ նվիրված «մարդկանց առեւտրի «զոհերի» հայտնաբերման եւ ուղեգրմանը»: Սեմինարը նպատակ ունի նպաստելու կառավարության համապատասխան մարմինների ու քաղաքացիական հասարակության միջեւ ռազմավարական գործընկերության հաստատմանը եւ «զոհերի» ուղեգրման արդյունավետ մեխանիզմի ստեղծմանը:

Սեմինարից առաջ ՁԼՄ-ներին ներկայացվեց բուն պրոբլեմն իր հիմնահարցերով: Կազմակերպիչներն ակնկալում են գտնել պրոբլեմի համատեղ լուծման ուղիներ, եւ իրականացնելու համար հրավիրել էին հյուպատոսների, իրավապահ մարմինների, մաքսային ծառայության, սահմանային վերահսկողության աշխատակիցների, միգրացիայի վարչության, ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի եւ նաեւ մեկ տասնյակ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների: Սեմինարի ուշադրության կենտրոնում են լինելու տրաֆիքինգի «զոհերի» հայտնաբերման մեխանիզմները եւ ոստիկանություն-հասարակական կազմակերպություններ համագործակցության մոդելները: Մեծ ուշադրություն է հատկացվելու գործնական հմտությունների զարգացմանը, այդ թվում նաեւ սպառնալից բնույթ չկրող հարցաքննության մեթոդներին՝ «զոհերին» կրկնակի հոգեբանական վնասվածք չպատճառելու նպատակով:

Սեմինարը կազմակերպել է ԵԱՀԿ Երեւանյան գրասենյակը, ՀՀ արտգործնախարարության, ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների եւ մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ), Միգրացիայի միջազգային կազմակերպության եւ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հետ համագործակցությամբ՝ իրավապահ մարմինների, հյուպատոսների եւ շահագրգիռ այլ կազմակերպությունների համար: Հանդես են գալու նաեւ Դորտմունդից (Գերմանիա) հրավիրված մասնագետները:

20-ից ավելի ելույթների եւ զեկույցների նյութերը Հայաստանում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ կհրատարակվեն մեկ գրքույկով, որն էլ կլինի ուղեցույց՝ այդ խնդիրն ինչ-որ չափով թեթեւացնելու համար:

Մ. Մ.

1500-ից ավելի վերելակ վթարային վիճակում

ԵՐԵՎԱՆ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ: 2003թ.-ին Երեւանում վերանորոգվել է ընդամենը 500 վերելակ: Վերանորոգման աշխատանքների մեծ մասը ֆինանսավորել են թաղամասերաները, որոնց տնօրինության տակ է գտնվում մայրաքաղաքի շենքերում տեղադրված մոտ 4200 վերելակների 30%-ը: Ինչպես հայտնեցին Երեւանի քաղաքապետարանում, մյուս 70%-ը, որը գտնվում է համատիրությունների տնօրինության տակ, ֆինանսական միջոցների սղության պատճառով գրեթե չի վերանորոգվում: Նշվեց նաեւ, որ Երեւանի շենքերում տեղադրված վերելակներից ներկայումս գործում է 3000-ը, որոնց կեսից ավելին գործում են 25-30 տարի եւ գտնվում է վթարային վիճակում: Մեկ վերելակի հիմնական վերանորոգման համար սովորաբար անհրաժեշտ է լինում ավելի քան 1000 դոլար:

Հայտարարություն

Հարգելի խմբագիր,

Ձեր թերթի 17.12.2003 թ.-ի թիվ 232 (2917) համարում տպագրված «Աշտարակ-կաթ»՝ աղմուկի թագավորություն» հոդվածի կապակցությամբ հայտնում ենք, որ «Աշտարակ-կաթ» փակ բաժնետիրական ընկերությունը ոչ մի առնչություն չունի Երեւանի Չեյթուն թաղամասի Կամարակ 2-րդ նրբանցքի եւ 16-րդ փողոցի բնակիչների հետ եւ հոդվածում տեղ գտած քննադատությունները չեն կարող վերաբերել նշված ընկերությանը:

Իսկ ինչ վերաբերում է «Երեւանի քաղաքային կաթի գործարան» փակ բաժնետիրական ընկերությանը, հայտարարում եմ, որ նշված ընկերության եւ Կամարակ փողոցի բնակիչների միջեւ ծագած աղմուկի վերաբերյալ վեճը մոտ 2 ամիս առաջ դադարել է: Կողմերը պատրաստվում են ստորագրել հաշտության համաձայնագիր եւ ներկայացնել դատարանի հաստատմանը: Ուստի թիվ 232 (2917) համարում զետեղված հոդվածը կորցրել է իր վաղեմությունը:

Հայտարարող՝
ԱՐԱԼԵՑ Ա.ԱԼԱԳՅԱՆ

ԱԶԳ

Խորհուրդ

Երկար ատեն ի վեր բիրտ միջամտութեան մը ուրուականը կը յածէր Կովկասի վերեւ: Այդ հեռանկարը տխուր եւ վսանգաւոր իրականութիւն մը դարձաւ, երբ պատերազմի ասուուածը՝ Դոնալդ Ռամսֆելդ, անակնկալ կերպով այցելեց Ադրբեջան եւ Վրաստան, ցուցական կերպով անտեսելով Հայաստանը, այդ արարքով իսկ տալով ազդանշանը, թէ առաջին երկու հանրապետութիւնները արդէն մտած են Ամերիկայի ծիրէն ներս, մինչ Հայաստան կը յամենայ ռուսական գօտիին մէջ: Այս քայլը վաղուց կը ծրագրուէր Ուաշինկթընի ռազմական շրջանակներուն կողմէ: Առաջին հերթին Ամերիկա ճանդեց Եուկոսլաւիան՝ ցոյց տալու համար Ռուսիոյ, թէ ան այլեւս անզօր էր պատսպանելու իր սլաւոն զարմիկները եւրոպայի մէջ: Յաջորդ քայլը առնուեցաւ Միջին Ասիոյ մէջ, Աֆղանստանի պատերազմի օրերուն, համեմատաբար անաղմուկ կերպով: Միայն նախագահ Պուշին խորհրդանշական կերպով այցելութիւն մը տուաւ այդ շրջանի ռուսական ռազմախարիսխին, յիշեցնելու համար Ուաշինկթընին, թէ «մենք այստեղ ենք», այդման:

Ռուսիոյ պատսպանութեան նախարարութեան շրջանակները վերջերս պատսօնապէս հաստատեցին, թէ իրենց երկրին ռազմական ուժը չափազանց սկսուած է՝ հազիւ կարենալ պատսպանողական պատերազմ մը մղելու: Պենտագոնի ռազմապատսական բազէները այդ յայտարարութեան պէտք չունին կարենալ գուշակելու համար երբեմնի հզօր Ռուսիոյ այսօրուան ռազմական աննախանձելի մակարդակը եւ անմիջապէս «նոր պահպանողականներու» առաքելը դրկեցին Կովկաս: Երկար ատեն ի վեր շրջանի քաղաքական դիտորդները զգուշացուցած էին Հայաստանի իշխանութիւնները, թէ ժամանակը կը գործէ հայոց դէմ եւ եթէ այսօր մենք չլուծենք Ղարաբաղի հարցը, տարբեր ոյժ մը պիտի գայ հարցը լուծելու անկախ մեզմէ եւ հաւանաբար ներհակ մեր շահերուն: Այսօր այդ վսանգը աւելի քան իրական կը դառնայ, երբ Ամերիկա բրօտէն մուտք կը գործէ շրջանէն ներս եւ իր օրակարգը կը դնէ սեղանի վրայ: Այս նոր զարգացումը խնդրական կը դարձնէ Հայաստանի ապահովութեան երաշխաւորումը ռուսական ռազմակայանին գոյութեամբ: Երբ Ռուսաստան անզօր հանդիսացաւ դարձաւ Եուկոսլաւիոյ անդամահատումին, փաստօրէն զիջեցաւ Միջին Ասիոյ իր ազդեցութեան գօտին Ամերիկայինի, ի՞նչ տարբեր ընթացք կրնայ բռնել Կովկասեան այս նոր զարգացումին դիմաց եւ որքանո՞վ կրնայ երաշխաւորել Հայաստանի գոյութիւնը...

Այսօր ժամանակն է հարց տալու, թէ Հայաստան անգամ մը ե՞ւս կը մնայ ուժի այս հաւասարակշռութեան սխալ կողմը:

Վրաստանի անկեալ նախագահը՝ Շեւարդնաձէ, յաջող կերպով սատարած էր Խորհրդային Միութեան կործանման, գործակցութեամբ Գորբաչեւի: Ան կարողացաւ միեւնոյն յաջողութեամբ կործանել Վրաստանը, եւ կործանելիք վերջին բանը, որ կը մնար՝ իր քաղաքական ասպարէզն էր, զոր աւարտեց անփառունակ կերպով: Որպէս կրեմլեան երբեմնի գործակատար, ան երկար ատեն տատանեցաւ իր արեւմտեան համակրութեանց ու Հիւսիսի վախին միջեւ: Երբեմն առ երեսուիա, Սերբիոյ մէջ ուսումնասիրելու համար, թէ Օպտոիը (ուսանողական ընդդիմութիւնը), «ինչպէս կարողացած էր իրականացնել նախագահ Միլոշեւիչի անկումը»: Այս բոլոր գործարքները կատարուած են օր ցերեկով, ամենայն համարձակութեամբ, «ժողովրդավարութիւն» մատակարարելու այդ երկրին: Այս բոլորին վրայ պետական քարտուղար Քոլին Փաուել ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարին եւ Շեւարդնաձէի հետ ունեցած հեռաձայնային եռակողմանի խօսակցութեան ընթացքին, թելադրած է վերջինին, որ «ճիշտ քայլը առնէ», այսինքն՝ հրաժարի իր պաշտօնէն: Երբ պրն Քոլին Փաուել Հիւսիսային Ատլանտեան երկիրները կը շրջէր ժողովրդավարութիւն քարոզելու, պրն Ռամսֆելդ ռազմական քայլերով կը մտնէր Ադրբեջան Իլհամ Ալիեւի արիւնոտ ձեռքը բռնելու. ան, որ խարդախուած ընտրութիւններով, սպանութիւններով, բռնութեամբ եւ սարսափով տիրացած էր իր հօր նախագահական աթոռին: Պրն Ռամսֆելդ կ՚երեւի չ՚անդրադառնար, թէ ինչպիսի ծիծաղելի վիճակի մը կը մատնուի ողջագուրելով միջնադարեան բռնատէրի մը հետ, երբ Պետքարտուղարութիւնը խստիւ քննադատած էր անոր ընտրութիւնը եւ Թրենտփերտնսի Ինքըրնեթընը կազմակերպութիւնն ալ Ադրբեջանը դասած էր 102 երկիրներուն մէջ 95-րդը, իբրեւ խարդախութեան եւ աղտօրինութեան բոյն:

Այնպէս կը թուի, թէ «ժողովրդավարութիւն» բառը այսօր Ուաշինկթընի մէջ ստացած է նոր իմաստ մը, որ ծանօթ չէր այս երկրի հիմնադիրներուն: Իր կարգին «Ուաշինկթընի Փոսթ» թերթը իր դեկտեմբեր 4, 2003 թիւին մէջ հետեւեալ նկարագրութիւնը կու տայ. «Ռամսֆելդ Ալիեւի ընտրութիւնը ողջունեց նախագահական պալատին մէջ, սակայն մամլոյ ասուլիսին ընթացքին չպատասխանեց լրագրողներու այն հարցումին, թէ ազա՞տ էին կամ միջազգային չափանիշներուն կը համապատասխանէի՞ն Ադրբեջանի ընտրութիւնները: Նման պարագաներուն պրն Ռամսֆելդի լուռ մնալը իր հազուագիւտ առաքինութիւններէն մէկն է. ան դեռ կարող էր լրջօրէն նայիլ հեռուստատեսութեան տեսախցիկին եւ ամենայն պաղարիւնութեամբ յայտարարել, թէ Ալիեւ կը հանդիսանայ ռամկավարութեան տիպար օրինակը: Չէ՞ որ Իրաքի պատերազմի նախօրէին, երբ Ռամսֆելդ կոպիտ կերպով կը վիրաւորէր Ամերիկայի դաշնակիցներն ու անոնց խոհեմ ղեկավարները, Ուաշինկթընի ամէնէն մօտիկ գործակիցներէն Սպանիոյ վարչապետ Ազնար յայտարարեց, թէ որքան փիչ խօսի ան քիչ պատսպանութեան նախարարը՝ այնքան աւելի կը շահի Ամերիկան: Հեգնանքը մէկդի դնելով պէտք է զգաստ կերպով դիտենք Ռամսֆելդի քաղաքական անցքը Կովկասէն, եւ, առժամեայ նախագահուհի Նինօ Բուրջանաձէի կողքին կանգնած՝ ռուսական զօրքերուն հեռացումը պահանջելը Վրաստանէն: Խօսքէն գործի անցնելով արդէն Ամերիկան հինգ ռազմաւարէ խոսացած է յանձնել Ադրբեջանին, ներառեալ 82 տէր երկարութեամբ հսկիչ նաւ մը, Կասպից ծովու սահմանները պատսպանելու: Իրականութեան մէջ Իրանի դէմ գրգռութիւն մըն է կատարուածը, որով Իրան եւս կը գտնուի «Չարիքի առանցքի (axis of evil) ցանկին վրայ: Ցանկ մը, որուն հեղինակներն են ժողովուրդի քուէներով չընտրուած «նոր պահպանողականները» (նեօ-կոնսերվատիվ): Այդ խումբին մաս կը կազմեն Փոլ Ուոլֆովից, Ռիչըրդ Փըրլ, Տագլաս Ֆեյթի, Ռիչըրդ Պոլթըն եւ քանի մը ուրիշներ, որոնք կը բանաձեւեն Ամերիկայի արտաքին քաղաքականութիւնն ու ռազմական ծրագիրները, երբեմն պետական քարտուղարութենէն անկախ կամ՝ անոր անտեսումով:

Ռամսֆելդի արշաւը դէպի Կովկաս արդէն հիմնովին փոխած է շրջանի ռազմաքաղաքական դիմագիծը: Հայաստանի երկու դրացիները, քաջալերուած այս բացայայտ միջամտութենէն, սկսած են ռազմաշունչ յայտարարութիւններ ընել: Օրինակ, Վրաստանի նախագահական գլխաւոր թեկնածուն, որ յայտնօրէն ամերիկեան դրածոյ մըն է, տակաւին նախագահական պատսպանի չտիրացած, սպառնալիքներ կը սփռէ աջ ու ձախ. ան ինքնավստահութեամբ կը յայտարարէ, թէ բոլոր անջատեալ շրջանները շուտով Թիֆլիսի իշխանութեան պիտի ենթարկէ, լաւ գիտնալով, որ անոնք կը վայելեն Մոսկուայի հովանաւորութիւնը: Իսկ Անարիոյ նախագահ Աբաշիձէին կը սպառնայ բանս նետել, եթէ շարունակէ իր ինքնավարական յաւակնութիւնները: Այս նոր սպառնալիքը ազդանշան է նաեւ Ջաւախքի հայութեան, ուր վրացի կառավարիչ մը ղրկուած է «դեմոկրատաբար» կառավարելու այդ հայաբնակ շրջանը:

Ռամսֆելդի այցի նախօրեակին, ԵԱՀԿ-ի խորհուրդի Մասքրիխտի նիստին, Ադրբեջանի արտաքին գործոց նախարարը եւս սպառնալից յայտարարութիւն մը ըրած էր Հայաստանին, արդարեւ պրն Վիլայէթ Գուլիեւ կը շեշտէ, թէ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ գոյութիւն ունեցող տագնապը միայն կարելի է լուծել Ադրբեջանի հողային ամբողջականութեան յարգումով: Ան կը պահանջէ, որ հայկական ուժերը անմիջապէս եւ առանց նախապայմանի հեռացուին ադրբեջանական հողերէն- ներառեալ Ղարաբաղէն- եւ գաղթական ազերիները վերադառնան իրենց բնակավայրը: Այս նոր զարգացումներու լոյսին տակ Հայաստանի եւ հայութեան կը մնան մի քանի տկար կարելիութիւններ.

ա) Այս թափանցումին դիմաց պէտք է իմանալ Ռուսիոյ կեցուածքը. թէ՝ ան մինչեւ ո՞ւր նահանջելու պատրաստ է: Ցարդ մեղմ հակազդեցութիւն մը իմացուեցաւ արտաքին գործոց նախարար Իվանովէն, որ յայտնեց, թէ Վրաստանի մէջ տեղակայուած ռուսական ռազմախարիսխներու հարցը պիտի լուծուի երկու երկիրներու միջեւ կայանալիք բանակցութիւններով:

Ռազմաքաղաքական նոր զարգացումներ Կովկասի մէջ

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

անզօր էր պատսպանելու իր սլաւոն զարմիկները եւրոպայի մէջ: Յաջորդ քայլը առնուեցաւ Միջին Ասիոյ մէջ, Աֆղանստանի պատերազմի օրերուն, համեմատաբար անաղմուկ կերպով: Միայն նախագահ Պուշին խորհրդանշական կերպով այցելութիւն մը տուաւ այդ շրջանի ռուսական ռազմախարիսխին, յիշեցնելու համար Ուաշինկթընին, թէ «մենք այստեղ ենք», այդման:

Ռուսիոյ պատսպանութեան նախարարութեան շրջանակները վերջերս պատսօնապէս հաստատեցին, թէ իրենց երկրին ռազմական ուժը չափազանց սկսուած է՝ հազիւ կարենալ պատսպանողական պատերազմ մը մղելու: Պենտագոնի ռազմաքաղաքական բազէները այդ յայտարարութեան պէտք չունին կարենալ գուշակելու համար երբեմնի հզօր Ռուսիոյ այսօրուան ռազմական աննախանձելի մակարդակը եւ անմիջապէս «նոր պահպանողականներու» առաքելը դրկեցին Կովկաս: Երկար ատեն ի վեր շրջանի քաղաքական դիտորդները զգուշացուցած էին Հայաստանի իշխանութիւնները, թէ ժամանակը կը գործէ հայոց դէմ եւ եթէ այսօր մենք չլուծենք Ղարաբաղի հարցը, տարբեր ոյժ մը պիտի գայ հարցը լուծելու անկախ մեզմէ եւ հաւանաբար ներհակ մեր շահերուն: Այսօր այդ վսանգը աւելի քան իրական կը դառնայ, երբ Ամերիկա բրօտէն մուտք կը գործէ շրջանէն ներս եւ իր օրակարգը կը դնէ սեղանի վրայ: Այս նոր զարգացումը խնդրական կը դարձնէ Հայաստանի ապահովութեան երաշխաւորումը ռուսական ռազմակայանին գոյութեամբ: Երբ Ռուսաստան անզօր հանդիսացաւ դարձաւ Եուկոսլաւիոյ անդամահատումին, փաստօրէն զիջեցաւ Միջին Ասիոյ իր ազդեցութեան գօտին Ամերիկայինի, ի՞նչ տարբեր ընթացք կրնայ բռնել Կովկասեան այս նոր զարգացումին դիմաց եւ որքանո՞վ կրնայ երաշխաւորել Հայաստանի գոյութիւնը...

Այսօր ժամանակն է հարց տալու, թէ Հայաստան անգամ մը ե՞ւս կը մնայ ուժի այս հաւասարակշռութեան սխալ կողմը:

Վրաստանի անկեալ նախագահը՝ Շեւարդնաձէ, յաջող կերպով սատարած էր Խորհրդային Միութեան կործանման, գործակցութեամբ Գորբաչեւի: Ան կարողացաւ միեւնոյն յաջողութեամբ կործանել Վրաստանը, եւ կործանելիք վերջին բանը, որ կը մնար՝ իր քաղաքական ասպարէզն էր, զոր աւարտեց անփառունակ կերպով: Որպէս կրեմլեան երբեմնի գործակատար, ան երկար ատեն տատանեցաւ իր արեւմտեան համակրութեանց ու Հիւսիսի վախին միջեւ: Երբեմն առ երեսուիա, Սերբիոյ մէջ ուսումնասիրելու համար, թէ Օպտոիը (ուսանողական ընդդիմութիւնը), «ինչպէս կարողացած էր իրականացնել նախագահ Միլոշեւիչի անկումը»: Այս բոլոր գործարքները կատարուած են օր ցերեկով, ամենայն համարձակութեամբ, «ժողովրդավարութիւն» մատակարարելու այդ երկրին: Շեւարդնաձէ, իր հրաժարումն եսք, հրապարակաւ խնդադատեց Ամերիկան, որ իր այդման մեծ ծառայութեանց դիմաց՝ այդպիսի խայտառակ մեկնում մը սահմանած էր իրեն:

Բոլոր անոնք, որոնք դոյզն կասկածն ունին Վրաստանի իշխանափոխութեան մէջ Ամերիկայի կատարած վճռական դերին մասին, պէտք է կարդան «Ուոլ Սթրիթ» օրաթերթի նոյեմբերի 24, 2003-ի թիւին մէջ երեւցած Հիու Փուիի ընդարձակ յօդուածը: Այն ուժերը, որոնք տաղալեցին Շեւարդնաձեն, առաջնորդուած ու ֆինանսաւորուած էին Ամերիկայի կողմէ, ոմանք ոչ-պետական (NGO) գործակալութեան պիտակին տակ. «Այդ կազմակերպութեանց գլխաւորը Ազատութիւն հիմնարկն էր (Լիպերթի ինստիտուտ), որ ամերիկեան կառավարութենէն եւ Ջորջ Սորոսի կողմէ կը ֆինանսաւորուէր», կ՚ըսէ պրն Փուի, եւ կը շարունակէ. «Ան բուն մղիչ ոյժը դարձաւ պրն Շեւարդնաձէն իր պատսպանէն հեռացնելու շարժումին ետին»: Յետոյ բացատրութիւններ կու տայ «Ռուսթավի-2» հեռուստակայանի- որ նոյնպէս ֆինանսաւորուած է Ամերիկայէն- կազմակերպած լրատուական արշաւին մասին: Վերջապէս կու տայ անունները երկու պատսպանական գործակալներու՝ Պոֆերիայի եւ Ռամիզվիլիի- աւելի նուրբ կերպով ասած՝ «Արեւմուտքի բարեկամներու»- որոնք Սորոս հիմնարկի ծախսերով մեկնած էին Եուկոսլաւիա, Սերբիոյ մէջ ուսումնասիրելու համար, թէ Օպտոիը (ուսանողական ընդդիմութիւնը), «ինչպէս կարողացած էր իրականացնել նախագահ Միլոշեւիչի անկումը»: Այս բոլոր գործարքները կատարուած են օր ցերեկով, ամենայն համարձակութեամբ, «ժողովրդավարութիւն» մատակարարելու այդ երկրին: Խօսքէն գործի անցնելով արդէն Ամերիկան հինգ ռազմաքաղաքական խոստացած է յանձնել Ադրբեջանին, ներառեալ 82 տէր երկարութեամբ հսկիչ նաւ մը, Կասպից ծովու սահմանները պատսպանելու: Իրականութեան մէջ Իրանի դէմ գրգռութիւն մըն է կատարուածը, որով Իրան եւս կը գտնուի «Չարիքի առանցքի (axis of evil) ցանկին վրայ: Ցանկ մը, որուն հեղինակներն են ժողովուրդի քուէներով չընտրուած «նոր պահպանողականները» (նեօ-կոնսերվատիվ): Այդ խումբին մաս կը կազմեն Փոլ Ուոլֆովից, Ռիչըրդ Փըրլ, Տագլաս Ֆեյթի, Ռիչըրդ Պոլթըն եւ քանի մը ուրիշներ, որոնք կը բանաձեւեն Ամերիկայի արտաքին քաղաքականութիւնն ու ռազմական ծրագիրները, երբեմն պետական քարտուղարութենէն անկախ կամ՝ անոր անտեսումով:

Ռամսֆելդի արշաւը դէպի Կովկաս արդէն հիմնովին փոխած է շրջանի ռազմաքաղաքական դիմագիծը: Հայաստանի երկու դրացիները, քաջալերուած այս բացայայտ միջամտութենէն, սկսած են ռազմաշունչ յայտարարութիւններ ընել: Օրինակ, Վրաստանի նախագահական գլխաւոր թեկնածուն, որ յայտնօրէն ամերիկեան դրածոյ մըն է, տակաւին նախագահական պատսպանի չտիրացած, սպառնալիքներ կը սփռէ աջ ու ձախ. ան ինքնավստահութեամբ կը յայտարարէ, թէ բոլոր անջատեալ շրջանները շուտով Թիֆլիսի իշխանութեան պիտի ենթարկէ, լաւ գիտնալով, որ անոնք կը վայելեն Մոսկուայի հովանաւորութիւնը: Իսկ Անարիոյ նախագահ Աբաշիձէին կը սպառնայ բանս նետել, եթէ շարունակէ իր ինքնավարական յաւակնութիւնները: Այս նոր սպառնալիքը ազդանշան է նաեւ Ջաւախքի հայութեան, ուր վրացի կառավարիչ մը ղրկուած է «դեմոկրատաբար» կառավարելու այդ հայաբնակ շրջանը:

Ռամսֆելդի այցի նախօրեակին, ԵԱՀԿ-ի խորհուրդի Մասքրիխտի նիստին, Ադրբեջանի արտաքին գործոց նախարարը եւս սպառնալից յայտարարութիւն մը ըրած էր Հայաստանին, արդարեւ պրն Վիլայէթ Գուլիեւ կը շեշտէ, թէ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ գոյութիւն ունեցող տագնապը միայն կարելի է լուծել Ադրբեջանի հողային ամբողջականութեան յարգումով: Ան կը պահանջէ, որ հայկական ուժերը անմիջապէս եւ առանց նախապայմանի հեռացուին ադրբեջանական հողերէն- ներառեալ Ղարաբաղէն- եւ գաղթական ազերիները վերադառնան իրենց բնակավայրը: Այս նոր զարգացումներու լոյսին տակ Հայաստանի եւ հայութեան կը մնան մի քանի տկար կարելիութիւններ.

ա) Այս թափանցումին դիմաց պէտք է իմանալ Ռուսիոյ կեցուածքը. թէ՝ ան մինչեւ ո՞ւր նահանջելու պատրաստ է: Ցարդ մեղմ հակազդեցութիւն մը իմացուեցաւ արտաքին գործոց նախարար Իվանովէն, որ յայտնեց, թէ Վրաստանի մէջ տեղակայուած ռուսական ռազմախարիսխներու հարցը պիտի լուծուի երկու երկիրներու միջեւ կայանալիք բանակցութիւններով:

բ) Եթէ այս հանգրուանին Հայաստան որոշէ հրաժարիլ ռուսական ռազմական պատսպանութենէն եւ լծուի Ամերիկայի կառքին՝ բացայայտ է, թէ ինչպիսի լուծում պիտի գտնէ Ղարաբաղի հարցը եւ ինչ ճակատագրի պիտի մատնուի Հայաստանը: Ապահովաբար Թուրքիոյ քաղաքական կեցուածքը եւ Ադրբեջանի քարիւղը աւելի գերակշիռ դեր մը պիտի ունենան:

գ) Ամերիկահայ գաղութի քաղաքական կարելիութիւնները կրնան կարեւոր ազդակ մը դառնալ Ուաշինկթընի միակողմանի քաղաքականութիւնը մասամբ հակակշռելու. պայման է, սակայն, որ լոբբիինգի մէջ կազմակերպութիւնները զիրար խաչաձեւելով, զիրար չեզոքացնող ընթացքներ չբռնեն: Նկատի ունենալով յառաջիկայ ընտրական տարին, Ուաշինկթընն չի կրնար բոլորովին անտարբեր մնալ հայկական պահանջներուն դիմաց. իսկ բոլոր այն անհատներն ու կազմակերպութիւնները, որոնք հանգանակութեան ձեռնարկած են ի նպաստ նախագահ Բուշին, պէտք է անդրադառնան, թէ անպայմանադիր ու անսակարկ ծառայութիւն մը նախագահին միայն կրնայ զինք քաջալերել, որ շարունակէ այսօրուան հայավնաս քաղաքականութիւնը. վարագիծ մը, որ վաղը Կովկասի մէջ նոր արիւնահեղութեան պատճառ կրնայ դառնալ: Նախագահ Բուշ գրաւոր կերպով խոստացած էր իր ընտրութենէն ետք սատարել Ցեղասպանութեան ճանաչման: Ցարդ չէ կատարած իր խոստումը եւ հետաքրքրուած ալ չի թուիր ըլլալ այդ հարցով: Այսօրուան հանգրուանին արդէն փոթորիկը սկսած է կուտակուիլ Կովկասի վերեւ. մաղթենք, որ յաջորդ եուկոսլաւիան կամ Իրաքը Կովկաս չի տեղափոխուիր:

Ատենն է լուռ, խոհեմ եւ զգօն քաղաքականութեան՝ խուսափելու համար նոր արիւնահեղութենէ մը:

ԴԵՏՐՈՅԹ, ԱՄՆ

Հիշում եմ, ուրեմն ապրում եմ

Գուլագի արդարամիտներին նվիրված միջազգային կոնգրես Միլանում

Մարդկության պատմությունը, ցավոք, ուղեկցվել է բռնություններով, այդ թվում եւ զանգվածային բռնաճնշումներով, որի դեմ պայքարը դարձել է ժամանակակից ամենաարդիական խնդիրներից մեկը: 20-րդ դարը եւս զերծ չմնաց այդպիսի երեւույթներից՝ դարասկզբին տեղի ունեցավ հայոց ցեղասպանությունը, ապա՝ հրեաներինը, արյունալի սպանդը Պոլ Պոտի կողմից եւ այլն: Նախկին խորհրդային երկրում իրենց սեւ հետքը թողեցին զանգվածային բռնաճնշումները, որոնցից զգալիորեն տուժեց նաեւ հայ ժողովուրդը:

Դեկտեմբերի 9-11-ը Միլանում տեղի ունեցավ միջազգային կոնգրես, որը նվիրված էր Գուլագի արդարամիտներին: Այն կազմակերպվել էր Միլանի համալսարանի, Իտալա-ռուսական հարաբերությունների զարգացման կենտրոնի, Լոմբարդիայի տարածաշրջանային ղեկավարության, Միլանի մունիցիպալիտետի եւ նրա խորհրդի նախագահության հովանավորությամբ: Նրա աշխատանքներին օժանդակում էր նաեւ Իտալիայի հայերի միությունը, որի նախագահ Պետրոս (Պիետրո) Քուչուքյանը նախագահության կազմում էր: Կոնգրեսի մասնակիցներն էին Իտալիայի, Ֆրանսիայի, Չեխիայի, Ռուսաստանի ճանաչված գիտնականներ, հասարակական գործիչներ եւ լրագրողներ (պրոֆ. Վիտտորիո Սրաղա, Սերժո Ռաղեցի, Ջովանի Գուաիտի, Նիկիտա Սրուվե, Ելենա Բոներ-Սախարովա, Ալեքսանդր Դանիել, Վլ. Տոյլ, Սերգեյ Կովալով, Արսենի Ռոգինսկի, Անատոլի Ռազումով եւ ուրիշներ):

Ելենա Բոները (ձեռնասայլակով) եւ Պետրոս Քուչուքյանը Սախարովի հուշարարի բացման եւ ծառատունկի արարողության ժամանակ

Հայաստանից հրավիրվել էին պատմական գիտությունների դոկտոր Արմենակ Մանուկյանը եւ Ամատուն Վիրաբյանը, որոնց զեկուցումների թեմաներն էին՝ «Ստալինյան բռնությունների դիմադրության փորձերը Հայաստանում (1930-ական թթ.)» եւ «Դիմադրության դրվագներ եւ ազգային ինքնության պաշտպանությունը՝ ստալինյան բռնաճնշումները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ներգաղթած հայերի նկատմամբ (1946-1950 թթ.)»: Կոնգրեսի աշխատանքների օրերին Միլանի քաղաքային պուրակում գտնվող «Արդարամիտների այգում» ել. Բոներն իր ձեռքով ծառ տնկեց եւ դրեց Անդրեյ Սախարովի հուշարարը:

Բարձր պատվի է արժանացել նաեւ մեր հայրենակից Պետրոս Քուչուքյանը՝ Հայ դատի, Հայոց ցեղասպանության խնդիրներին անմնացորդ նվիրվածության համար: Նրա հեղինակությամբ եւ ջանքերով լույս են տեսել բազում գրքեր, փաստաթղթեր՝ նվիրված այդ հարցերին: Անգնահատելի է նրա դերն Իտալիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործում, ինչպես նաեւ նրա եւ կնոջ՝ Աննա-Մարիա Քուչուքյանի բարեգործական գործունեությունը Հայաստանում (Սպիտակում) եւ այլն:

Օգտագործելով կոնգրեսի նկատմամբ հասարակության որոշակի հետաքրքրությունը, այնտեղ մեկ անգամ եւս հնչեց Հայոց ցեղասպանության հարցը, իսկ «Կոլոն» թատրոնի սպասասրահում հաջողությամբ վաճառվում էր Պ. Քուչուքյանի ջանքերով հրատարակված գիրքը, որտեղ զուգահեռներ էին անցկացված հրեաների եւ հայերի ցեղասպանությունների միջեւ:

Հայ գիտնականների ելույթները եւս արժանացան մասնակիցների, տեղի մամուլի եւ հեռուստատեսության ուշադրությանը, մասնավորապես Ա. Մանուկյանի զեկուցման նախաբանում հնչած «Հիշում ենք, ուրեմն ապրում ենք» խոսքերը դարձան կոնգրեսը լուսաբանող որոշ հոդվածների եւ հեռուստահաղորդումների բնաբաններ: Կոնգրեսում հնչած զեկուցումները հրատարակվելու են առանձին գրքով, իտալերեն, ֆրանսերեն եւ ռուսերեն: Նրա աշխատանքները կրկին ցույց տվեցին, որ քաղաքական բռնությունների դեմ պայքարը մնում է արդիական խնդիր, իսկ նման միջոցառումներին հայ գիտնականների մասնակցությունը կարող է նպաստել Հայ դատի, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման անհրաժեշտ գործին:

Ս. Մ.

ԱԶԳ

Միջազգային

ԱՄՆ-ի աջակցությամբ նախագահ ընտրվելը ապահովելու է Իլհամ Ալիեւի համար

Ուրեմն Ադրբեջանն էլ կնախընտրի ԱՄՆ-ի հետ անմիջական կապը առանց Թուրքիայի միջնորդության

Դեկտեմբերի 15-ին Բաքվում հողին էր հանձնվել բոլոր ժամանակների ամենաբանավոր ադրբեջանցու՝ Հեյդար Ալիեւի մարմինը: Նրա թաղմանը Ռուսաստանը, Ուկրաինան, Ղազախստանը, Թուրքիան ներկայացված էին նախագահների, իսկ Վրաստանը՝ նախագահի պատասխանատու եւ նախկին նախագահի մակարդակներով: Օգտվելով առիթից նշենք, որ վերոհիշյալ բոլոր երկրները, բացառությամբ Թուրքիայի, ԱՊՀ անդամ են, որոնցից թերեւս միայն Ղազախստանն էր, որ իբրեւ թուրքալեզու հանրապետություն հանձին Նազարբաեւի, նախագահի մակարդակով էր ներկայացել թաղմանը:

Սա ուշագրավ փաստ է, հատկապես թուրքալեզու հանրապետությունների համագործակցություն ստեղծելու Թուրքիայի հավակնությունների, ինչպես նաեւ Ալիեւի թաղմանը վերոհիշյալ երկրների նախագահների մասնակցությունն Ադրբեջանի միջազգային բարձր հեղինակությանը վերագրելու թուրք պետական գործիչների փորձերի սնանկության առումներով: Ինչ միջազգային հեղինակություն, երբ դա պատշաճ մակարդակով չեն հարգում Ադրբեջանի հետ այսպես կոչված եղբայրական կապերով կապված Ուզբեկստանը, Թուրքմենստանը եւ Ղազախստանը:

Ուրեմն խնդիրն Ադրբեջանի միջազգային հեղինակությունը չէ, այլ հեղինակության մասին եզրահանգումներով Ալիեւի թաղումը Բաքվում խաղաղ բնակչության նկատմամբ բիրտ ուժի գործադրման միջոցով մթագնած նախագահական ընտրությունները պայծառացնելու նպատակին ծառայեցնելը: Որքան էլ դա անհրաժեշտ լինի Իլհամ Ալիեւին, այնուամենայնիվ, հարց է ծագում՝ ինչո՞ւ են այդ պարտականությունն ստանձնում թուրք պետական գործիչները: Պատասխանը միանշանակ է՝ որովհետեւ նախագահական ընտրություններում Իլհամը Վաշինգտոնի թեկնածուն էր, որն էլ մթագնման սպառնալիքի տակ էր դնում Ադրբեջանում դիրքերի հետագա ամրապնդման Թուրքիայի հեռանկարը: Այսինքն՝ Վրաստանի տարբերակը կրկնվում է, ինչը լուրջ մտավախություն է պատճառում Թուրքիայի ղեկավարներին:

Ինչո՞վ դա բացատրել: Մինչ հարցին պատասխանելը նշենք, որ Թուրքիան Ալիեւի թաղմանը ներկա էր ամենաբարձր մակարդակով: Բացի երկրի նախագահ Ահմեդ Նեջդեթ Սեզերից, վարչապետ Ռեջեպ Թայիփ Էրդողանից, թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Հիլմի Օզքյոքից, թաղման արարողությանը մասնակցել են 10 նախարարներ եւ 76 պատգամավորներ:

Թերեւս բացակայել է Սուլեյման Դեմիրելը: Թուրքական «Վաքիթ» թերթը դեկտեմբերի 18-ի համարում անդրադառնալով դրան գրում է. «Թուրքիայի 9-րդ նախագահ Սուլեյման Դեմիրելը չմասնակցեց Հեյդար Ալիեւի թաղմանը: Թերեւս դրանով էլ անհավատարմության օրինակ ցույց տվեց, որովհետեւ երբ ողջ էր Ադրբեջանի նախագահը, նրան «եղբայրս, բարեկամս» անվանելու ոչ մի առիթ բաց չէր թողնում»: Ավելին, ըստ թերթի, Դեմիրելը, ստանալով Ալիեւից Ադրբեջանի պատվավոր քաղաքացու կոչումը, նրան ասել էր. «Առ այսօր ես ձեզ դիմում էի «ազիզ եղբայր» ձեւով: Հիմա արդեն մեծարգո նախագահ եմ ասում, որ կատարեմ Ադրբեջանի քաղաքացիությունից բխող իմ պարտականությունը»:

Ինչ վերաբերում է Թուրքիայի վերոհիշյալ մտահոգությանը, ապա պետք է ասել, որ Հեյդար Ալիեւը ամերիկամետ դիրքորոշում ուներ: Թեեւ նա Ադրբեջանում ամերիկամետ քաղաքականություն էր վարում, սակայն Վաշինգտոնի աջակցությամբ նախագահ չէր դարձել, ոչ էլ նախագահական ընտրություններում, ինչպես Իլհամը, եղել էր ԱՄՆ-ի թեկնածուն: Թերեւս այս հանգամանքը, անկախ որեգրած դիրքորոշման բնույթից, Հեյդար Ալիեւին տալիս էր ամերիկյան ազդեցությունը ռուսականով հավասարակշռելու եւ հավասարակշռության կայունությունը Թուրքիայի հետ ռազմական ու ռազմավարական բնագավառներում համագործակցությամբ ապահովելու հնարավորություն:

Եթե մի կողմ թողնենք փորձի պակասը, ընտրություններում Վաշինգտոնի թեկնածու լինելը, առավել եւս նրա աջակցությամբ նախագահ ընտրվելն Իլհամ Ալիեւի համար չափազանց պարտավորեցնող հանգամանք է, հատկապես այն դեպքում, երբ աչք են փակում խախտումների վրա եւ ողջամտորեն շրջանցում ինչպես սպանությունները ու ծեծբակալությունը, այնպես էլ ցուցարարների նկատմամբ բիրտ ուժի գործադրումը:

Այլ կերպ՝ Իլհամ Ալիեւը երկրում ամերիկյան ազդեցությունը ռուսականով հավասարակշռելու հնարավորություն գրեթե չունի: Հետեւաբար չի ունենա հավասարակշռության կայունությունը Թուրքիայի հետ համագործակցելու միջոցով ապահովելու կարիք: Այն առումով, որ ԱՄՆ-ը, հանձին Վրաստանի, ռազմական ներկայություն է ապահովել Անդրկովկասում: Ուրեմն նա, չունենալով Անդրկովկասում Թուրքիայի միջոցով գործելու կարիք, պետք է գործի անմիջականորեն:

Դա ենթադրում է ԱՄՆ-ի անդրկովկասյան քաղաքականության մեջ Թուրքիայի նշանակության զգալի նվազում: Այս պայմաններում Իլհամ Ալիեւի, հետեւաբար Ադրբեջանի, ինչպես եւ Վրաստանի համար միանգամայն նախընտրելի է դառնում ԱՄՆ-ի հետ Թուրքիայով միջնորդավորված կապի փոխարեն ուղղակի կապ հաստատելը: Իսկ դա, անկախ Իրաքի հարցում ԱՄՆ-ի հետ տարաձայնություններից, չի կարող նպաստել Թուրքիայի ազդեցությանը ոչ Ադրբեջանում, ոչ էլ Վրաստանում: Ուրեմն նրա ազդեցությունը կթուլանա նաեւ Անդրկովկասում:

ՎԱՀՈՒ ՉԱՔԲԱՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Վլադիմիր Պուտինը կրկին կառաջադրի իր թեկնածությունը

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը երեկ հեռուստատեսությամբ ռուսաստանցիների հարցերին պատասխանելիս պաշտոնապես հայտարարել է, որ մարտի 14-ին իր թեկնածությունն է առաջադրելու երկրորդ անգամ ՌԴ նախագահ ընտրվելու համար: «Ես նախատեսում էի այս հայտարարությունն անել առաջիկա օրերին», իր թեկնածության կապակցությամբ նշել է նախագահ Պուտինը: «Այո, իմ պատասխանը դրական է, շուտով պաշտոնական հայտարարություն կանեմ այս առնչությամբ», ավելացրել է նա:

Մոսկվայից Ֆրանսպրեսի թղթակիցը հաղորդում է, որ այսօր Պուտինի ժողովրդականությունը հասնում է 80 տոկոսի: 2000 թ. մարտին նա Ռուսաստանի նախագահ ընտրվեց ընտրությունների առաջին իսկ փուլում: Ներկայումս ոչ ոք չի կասկածում, որ նա հեշտությամբ կվերընտրվի 2004 թ. մարտի 14-ին: Այսպիսով, ռուսաստանցիներն իրենց հարցերն ուղղում էին փաստորեն ոչ թե նախագահության թեկնածուին, այլ հենց ապագա նախագահին: Հազարավոր ռուսաստանցիների մտահոգում են մասնավորապես կենսաթոշակները, բնակարանային վաս պայմանները եւ բանակի բարեփոխման խնդիրները:

Ընդհանուր առմամբ, նախագահին հասցեագրվել է ավելի քան 1 միլիոն հարց՝ ինտերնետով, հեռախոսով կամ անմիջականորեն հեռուստախցիկների առջեւ: Նախագահ Պուտինն արդեն երրորդ տարին անընդմեջ այս ձեւով պատասխանում է ռուսաստանցիներին հուզող հարցերին: Նրա խոսքերով, 2003 թ.-ին Ռուսաստանն իրեն դրսեւորել է որպես առողջ եւ արագորեն զարգացող երկիր: Տնտեսական աճը, որը 2002 թ. կազմել է 4,3 տոկոս, այս տարի կհասնի 6,6-6,9 տոկոսի: Երկրի արտաքին պարտքն էապես կրճատվել է, բնակչության իրական եկամուտներն աճել են 11, կենսաթոշակները՝ 7 տոկոսով: Միաժամանակ նախագահը խոստովանել է, որ 31 մլն ռուսաստանցիներ շարունակում են ապրել անհրաժեշտ նվազագույնից ցածր կենսապայմաններում: Նրա խոսքերով, «սա շատ մեծ թիվ է, որը նվաստացուցիչ է Ռուսաստանի համար»:

Հարցերին պատասխանելիս Պուտինը նաեւ ընդգծել է, որ առաջիկա տարիները պետք է հնարավորություն տան ընդունելու «քաղաքական որոշումներ», որոնք պետք է բարելավեն բնակչության կենսապայմանները: Վետերաններից մեկի հարցին պատասխանելիս Պուտինն ասել է, որ Իրաքում ԱՄՆ-ի երկար մնալը չի համապատասխանում Ռուսաստանի շահերին: Նա ԱՄՆ վարչակազմին հորդորել է հրաժարվել «անպարտելիության զգացումից»:

Չեչենները խմբերով հարձակվում են դաղստանյան փոքր բնակավայրերի վրա

Չեչեն դաշտային հրամանատար Դադաեւի ջոկատը բաժանվել է խմբերի, որոնք սկսել են հարձակվել Դաղստանի Ցունտայի շրջանի փոքր բնակավայրերի վրա: Շրջանի վարչակազմի ղեկավար Նուրուլա Աբդուլ Քադիրովը երեկ Ինտերֆաքսի թղթակցին հայտնել է, որ ելուզակները տեղացիներին սպիտում են հաց թխել, մթերք բերել: Այդ ամենը խլելով՝ նրանք հեռանում են եւ թաքնվում լեռներում:

Դաղստանի անվտանգության խորհրդի քարտուղար Ահմեդնաբի Մահդիհաջիեւը ՌԻԱ գործակալությանը հայտարարել է, որ Դաղստան ներխուժած ելուզակների որոնումները շարունակվում են: Նա չի բացառել, որ չեչեն առանձին գրոհայիններ թափանցած լինեն Ցումադիի շրջան:

Զինվորականների տվյալներով, դեկտեմբերի 15-ին Դաղստանում հայտնաբերված չեչեն գրոհայինների ջոկատը գլխավորում է դաշտային հրամանատար Դադաեւը, որը Չեչնիայում կռվել է ռուսական զորքի դեմ: Դաղստանում ռուսաստանցի 9 սահմանապահների սպանելուց, Շաուրի եւ Գալաթլի գյուղերում 8 պատանդ վերցնելուց եւ ապա ազատ արձակելուց հետո չեչենները թաքնվում են լեռներում: Հյուսիսային Կովկասի զինվորական օկրուգի շտաբի պետ Ալեքսեյ Մասլովի խոսքերով, ելուզակներին որոնում են բանակի հատուկ ջոկատները եւ սահմանապահները: Հատուկ գործողության ընթացքում սպանվել են 12 ելուզակներ:

Վրաստանը ներողություն է խնդրել Բերեզովսկու այցի պատճառով

Վրաստանը պաշտոնապես խոստովանել է, որ իր սահմանապահները սխալ են վարվել, երբ նախկին ռուսաստանցի մագնատ Բորիս Բերեզովսկուն թույլատրել են անարգել թափանցել այցելել ուրիշի անունով տրված փաստաթղթերով: ԶԼՄ-ները հանիցս տեղեկացրել են, որ Ռուսաստանում Բերեզովսկուն ամբաստանում են ֆինանսական խարդախությունների եւ խոշոր յուրացումների մեջ: Վերջերս Լոնդոնում քաղաքական ապաստան ստացած Բերեզովսկին դեկտեմբերի սկզբներին այցելել էր Վրաստան:

Այդ դեպքի կապակցությամբ Վրաստանի արտգործնախարար Թեդո Ջափարիձեն չորեքշաբթի օրը Ռուսաստանի ԱԳՆ-ին է փոխանցել հատուկ նոտա: Երեկ «Իզվեստիա» թերթին տված հարցազրույցում նախարարը հայտնել է, որ նոտայի ընդհանուր բովանդակությունը հետեւյալն է. «Մենք խոստովանում ենք, որ Բերեզովսկու հետ կապված իրավիճակում սխալ ենք թույլ տվել: Այն թույլ տված մարդիկ պատիժ կկրեն»:

Ջափարիձեի խոսքերով, «ռուս-վրացական հարաբերությունների բուն պատմությունը մեծ չափով կազմված է սխալներից կամ կեղծաններից»: Նա առաջարկում է. «Եկեք, չմոռանալով դրանք, փորձենք կառուցել նոր հարաբերություններ»:

Դեկտեմբերի լույս 3-ի գիշերը Լոնդոնից Թբիլիսի մեկնած Բերեզովսկին ներկայացրել էր Պլատոն Ելենինի անունով փաստաթղթեր, որոնց վրա Լոնդոնում վրացական այցագիր էր դրված: Թբիլիսիում նա հանդիպել էր բիզնեսի գծով իր նախկին գործընկեր Բադրի Պատարակացիվիլու հետ եւ նույն օրը մեկնել Վրաստանից:

Ըստ Մաղլեն Օլբրայթի, բեն Լադենը ձերբակալված է

Ամերիկյան «Ֆոքս» հեռուստաընկերությունում հարցազրույցի նախաթատրաստվելիս մասնավոր զրույցի ժամանակ ԱՄՆ նախկին պետքարտուղար Մաղլեն Օլբրայթը հայտարարել է, թե աշխարհի թիվ մեկ ահաբեկիչ Ուսամա բեն Լադենը ձերբակալված է: Նրա խոսքերով, ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը ձերբակալության մասին չի հայտարարում լոկ այն պատճառով, որ սպասում է հարմար առիթի: Նախկին պետքարտուղարը կարծում է, որ Բուշը ձերբակալության մասին կհայտարարի 2004 թ. կայանալիք նախագահական ընտրություններից մի քանի օր առաջ: Ինչպես հայտնի է, Բուշը նախագահության թեկնածուներից մեկն է: Օլբրայթի խոսքերով, բեն Լադենը դառնալու է նախագահ Բուշի «հոկտեմբերյան անակնկալը»:

Մաղլեն Օլբրայթն այդ խոսակցությունից հետո լրագրողներին հայտարարեց, թե իր ասածն ընդամենը կատակ է եղել: «Դա հեգնական դիտողություն էր եւ ոչ ավելին», հայտարարեց նա արդեն «Ֆոքսին» տված պաշտոնական հարցազրույցի ժամանակ: Բայց այս տարօրինակ հայտարարությունն անձամբ լսած մարդիկ ասում են, որ խոսելու պահին Օլբրայթը բնավ չի ժպտացել եւ ըստ երեւույթին դա կատակ չի եղել:

Սպիտակ տունն առայժմ որեւէ ձեւով չի արձագանքել Օլբրայթի խոսքերի առաջացրած մեծ աղմուկին: «Ես չեմ կարծում, թե պետք է ուշադրություն դարձնեմ քաղաքական գործիչների յուրաքանչյուր անհեթեթ մեկնաբանությանը», հայտարարել է Սպիտակ տան մամլո քարտուղար Սքոթ Մաքլելանը:

Իրաքի մի շարք հարեւաններ կմեղադրեն Սադդամ Հուսեյնին

Իրաքի հարեւան պետություններից մի քանիսը տուժել են Սադդամ Հուսեյնի գործողություններից, ուստի մտադիր են դատական հայցերով նրան մեղադրել պատերազմական հանցագործությունների մեջ: Որոքեր գործակալությունը հաղորդում է, որ առաջիկա դատավարությունում գլխավոր հայցվորները լինելու են Իրանը, Իսրայելը եւ Քուվեյթը:

Մասնավորապես Քուվեյթի վարչապետ, շեյխ Սաբահ ալ Ահմադ ալ Սաբահը հայտնել է, որ իր երկրի ԱԳՆ-ն եւ արդարադատության նախարարությունն արդեն փաստաթղթեր են նախապատրաստում Քուվեյթցիների դեմ Սադդամ Հուսեյնի կատարած հանցագործությունների վերաբերյալ:

Իրաքի իշխանությունները հայտարարել են, որ պատրաստ են իրաքցի նախկին ղեկավարի դատավարության ընթացքում տեղեկություններ ներկայացնել 1980-1988 թթ. իրան-իրաքյան հակամարտության տարիներին իրաքյան բանակի գործած ոճիրների մասին: Այդ պատերազմում մոտ 300 հազար իրանցիներ զոհվեցին հիմնականում քիմիական զենքից:

Իսրայելն իր հերթին Հուսեյնին կմեղադրի Պարսից ծոցի 1991 թ. պատերազմի ժամանակ իր տարածքի վրա «Սկադ» հրթիռներ արձակելու եւ պաղեստինցիների արմատական ահաբեկչական կազմակերպություններին ֆինանսավորելու համար:

Բացի դրանից, Հուսեյնին դատի տալու ցանկություն են հայտնել լիբանանցի մի խումբ քրիստոնյաներ: Նրանք հայտարարել են, որ իրենք բանտարկության եւ խոշտանգումների են ենթարկվել, երբ իսլամ էին ուսումնասիրում Իրաքի կրոնական կենտրոններից մեկում:

Պ. Բ.

«Մենք բավարարվել ենք մի կաթիլ Սարոյանով»

Հարցազրույց կինոգետ-թարգմանիչ Զավեն Բոյաջյանի հետ

Ինչի՞ն է բնորոշ Սարոյանին որպես գրողի: Նա բուռն է, պոռթկուն եւ խելացի: Նա սիրում է ինքն իրեն եւ անբախույց ներահայաց է, նա թախծոտ է, նրբազգաց ու մարդկային: Նա ասում է դաժանությունը բոլոր դրսեւորումներով, նա հարգում է մարդկային հպարտությունն ու արժանապատվությունը». սա 20-րդ դարի ամերիկացի հեղինակավոր գրաքննադատ Բարթը Ռասոյի գնահատականն է Սարոյանի ստեղծագործությանը: Գրաքննադատի համար իր տեսակետն արտահայտելը մասնագիտական պարտք է: Մինչդեռ գրողի երկերի շուրջ թարգմանչի խոհերի մասին ընթերցողը հազիվ թե պատկերացում կազմի, մանավանդ, եթե ներածականում չկա թարգմանչի խոսքը:

Զավեն Բոյաջյանի թարգմանությամբ լույս են տեսել Վիլյամ Սարոյանի «Վեսլի Ջեքսոնի արկածները», «Մայրիկ, ես սիրում եմ քեզ» վեպերը, «Հայրիկ, դու խենթ ես» վիպակը, «Քո կյանքի ժամերը», «Հե՛յ, ո՞վ կա», «Տարեկանի արտում», «Պինգ-պոնգ խաղացողները» պիեսները, մի շարք պատմվածքներ եւ այլ գործեր: Հանրությունը Զավեն Բոյաջյանին առավելապես ճանաչում է որպես կինոգետի, իսկ նրա թարգմանչական գործունեության մասին քիչ է խոսվում, ինչը կարելի է բացատրել, նախ եւ առաջ, ընթերցասիրության նվազմամբ:



Գծանկարը Սիրուն Երեցյանի (Լոս Անջելես)

- Ինչպիսի՞ն եք հայ ընթերցողը Վիլյամ Սարոյանի 70-ամյակին, եւ ինչպիսի՞ն եք պատկերացնում նրան՝ գրողի 100-ամյակին:

- Ընթերցանության նկատմամբ հետաքրքրության նվազումը գլոբալ խնդիր է: Հարցը միայն Հայաստանի հազար ու մի կարգի դժվարությունները չեն: Հիմա վիզուալ արվեստների, տեսալսողական միջոցների ժամանակներ են, եւ գիրքը արտաքին աշխարհի հետ հիմնականում կապարվում է այդ միջոցներով: Մենք պիտի որոշակի ճանապարհ անցնենք, վիզուալ հեղափոխության փուլը արդեն, որպեսզի վերջին օրերս հովերով կամ կարոտախտով վերադառնանք նախորդ փուլին, որովհետեւ, իմ խորին համոզմամբ, ոչինչ չի կարող փոխարինել գրքին: Բնականաբար, Սարոյանի նկատմամբ եւս այն հետաքրքրությունը չկա, ինչ ծեր նշած 70-ամյակին էր: Բայց ընթերցողից չես կարող պահանջել, որ ինքն իրեն հայտնաբերի Սարոյանին ու խանդավառվի: Սարոյանին, բոլոր իսկական արժեքների պես, պետք է մատուցել: Սարոյանական մի ամբողջ ինստիտուտ պիտի գործի, որը կզբաղվի նրա վիթխարի գրական ժառանգությամբ, չթարգմանված գործերով եւ այլն: Նա մեր ամենամեծ ինտելեկտուալ հարստություններից մեկն է, եւ պիտի կարողանանք ընթերցողին ներկայացնել, հետաքրքրություն արթնացնել: Մի ժամանակ Սարոյանի հանդեպ վերաբերմունքով էի դատում տվյալ մարդու գեղագիտական ճաշակի, արվեստի, գրականության հետ առնչության կամ, թերկուզ, հումորի զգացման մասին: Այսօր էլ անկեղծորեն համոզված եմ՝ Սարոյանն այն չափանիշերից մեկն է, որով կարելի է պատկերացում կազմել որեւէ մեկի հոգեւոր զարգացման աստիճանի, ինտելեկտուալ մակարդակի մասին:

- Սարոյանը գրելիս խախտել է անգլերենի շատ կանոններ՝ նոր անգլերեն ստեղծելով: Իսկ Սարոյան թարգմանելիս դուք նոր հայերեն ստեղծելու կարիք զգացե՞ք եք:

- Երբ ձեռնարկեցի թարգմանության գործը, խոր հուսահատության մեջ ընկա. ինձ թվում էր, թե Սարոյանին անհնար է հայերեն վերարտադրել: Բայց երկար տառապանքներից հետո հասկացա, որ խնդիրը, ավելի շուտ, իմ մեջ է, այսինքն որքանով եմ տիրապետում հայերենի լեզվական հնարավորություններին, արտահայտչաձեւերին, որքանով եմ Սարոյանին ճիշտ ընկալում, որպեսզի գտնեմ նրա աշխարհին բնորոշ լեզվական միջոցներ: Սարոյանի լեզուն բազմաշերտ է: Նրա տարբեր գործեր գրված են լեզվական տարբեր արտահայտչամիջոցներով: Մի շարք պատմվածքներ, ինքնակենսագրական գործեր ընտիր գրական անգլերենով են: Մյուսներում իշխում է խոսակցական անգլերենը: Եվ այս ամենը շատ որոշակի սարոյանական կնիք ունի: Բնականաբար, առաջնահերթ խնդիրը լեզվական այդ որակին համարժեք հայերեն տանելն էր: Իմ առածը, այսպես, թե այնպես, փորձարարություն էր, եթե նկատի ունենանք, որ թարգմանական մեծ ավանդույթներ չունենք, մանավանդ ժամանակակից գրողի թարգմանելու համար: Ուստի փորձեցի ինքս ինձ համար կողմնորոշիչներ գտնել: Օրինակ, հայտնաբերեցի, որ Սարոյանի շատ գործերում թումանյանական շունչ կա, հատկապես մտածողության, պատմելաոճի մեջ: Եվ իմ կարեւոր կողմնորոշիչներից մեկը Թումանյանն էր: Ես ջանացել եմ գտնել մի լեզու, որը ոչ զուտ գրական է, ոչ զուտ խոսակցական, ոչ էլ առավել եւս՝ կենցաղային, այլ խաչասերման արդյունք է, հիբրիդ, արհեստական, սինթետիկ ծագում ունի, բայց ամեն գնով պիտի դա թաքցվի եւ առավելագույնս բնական թվա: Սարոյանական արձակի առանձնահատկություններից մեկն էլ ներքին ռիթմն է: Եվ, այս առումով, հազիվ թե արդելու ընդունակություն ունենար: Ուստի կամ Խաչիկ Հայյանի թարգմանությունը պիտի չորսհատորյակում վերահրատարակվեր, կամ էլ վեպը նորից թարգմանվեր: Ընտրվեց երկրորդ տարբերակը, նաեւ այն նկատառումով, որ Խաչիկ Հայյանը գործ էր ունեցել բավական անհաջող ռուսերեն թարգմանության հետ, որից առանձնակի արդյունք սպասել պարզապես հնարավոր չէր: Ռուսերեն թարգմանությունների իմաստով Սարոյանի բախտը չի բերել եւ, ի տարբերություն շատ ամերիկացի գրողների, որոնցով զբաղվել են ռուս առաջնակարգ թարգմանիչներ, Սարոյանին թարգմանել է բառացիորեն ով պատահի: Հրաշալի բացառություն է Նատալյա Գոնչարը, որը, իմ կարծիքով, Սարոյանի լավագույն ռուսերեն թարգմանիչն է եւ իր մեծ նպաստն է բերել գրողի հայերեն չորսհատորյակին՝ որպես կազմող ու խմբագիր: Ես նրանից շատ բան եմ սովորել Սարոյան թարգմանելիս եւ միշտ շնորհակալ կլինեմ, քանի որ հենց նրա՝ սարոյանական աշխարհի իսկական Վերգիլիոսի օգնությամբ մտա այդ աշխարհ: Սարոյանի որոշ գործեր էլ արդեն թարգմանված էին բնագրից, բայց չորսհատորյակը հրատարակելիս դրանք վերստին թարգմանելու անհրաժեշտություն ծագեց: Օրինակ, «Քո կյանքի ժամերը» պիեսը՝ «Շեր կյանքի ժամանակը» վերնագրով, թարգմանել է Ստեփան Ալաջաջյանը, իսկ «Հե՛յ, ո՞վ կա»-ն՝ «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ» վերնագրով, Խաչիկ Դաշտենցը: Բնավ միտք չունենալով նսեմացնելու այդ մարդկանց վաստակը՝ ասեմ, որ նրանց ընտրած լեզվական միջոցները այնքան էլ համապատասխան չեն այն ոճին, որով գրված են այս գործերը: Սարոյանի պիեսներում աշխույժ, կենդանի խոսակցական լեզու է: Մինչդեռ Ալաջաջյանի թարգմանությունը թունդ գրական դրոշմ ունի եւ արհեստական հնչողություն: Իսկ Խաչիկ Դաշտենցի թարգմանության վրա դրոշմ է թողել նրա շեխովյան փորձը: Դա Սարոյան է շեխովյան կնիքով: Բայց Սարոյանը իր կնիքն ունի, եւ, փառք Աստծո, այդ կնիքը շատ հստակ է արտահայտված:

- Սարոյանը հա՞յ գրող է:

- Իմ կարծիքով, Սարոյանին անհնար է միանշանակորեն համարել հայ կամ ամերիկացի գրող: Նա երկսայրի գիտակցությամբ, երկփեղկված հոգեկան կերտվածքով մարդ էր: Դա նրա շատ անձնական խնդիրների, ծախողումների բուն պատճառներից մեկն էր, բայց եւ դարձել է Սարոյանի գրականության հատկապես դժվար էր «Հայրիկ, դու խենթ ես» վիպակի թարգմանությունը: Ինձ թախտ վիճակվեց ոչ միայն սարոյանական նոր գործեր թարգմանել, այլեւ ինչ-ինչ երկեր վերաթարգմանել: Սարոյանի չորսհատորյակի համար պետք է նախկինում թարգմանված որոշ երկեր համեմատեի անգլերեն բնագրի հետ եւ անհրաժեշտ շտկումներ անեի: Բայց ձեռնամուխ լինելով «Վեսլի Ջեքսոնի արկածները» վեպին՝ հասկացա, որ դա անիմաստ աշխատանք է: Վեպը ռուսերենից թարգմանել է շատ հարգարժան մի մարդ՝ Խաչիկ Հայյանը: Իմ միջամտությունը նրա առածին բռնի էր, արհեստական, ինչ-որ անհեթեթ խառնածին կստացվեր, որը գենետիկական, ինտելեկտուալ, հոգեւոր հիմք: Ըստ էության, նույն այդ երկփեղկվածությունից է ծնվել սարոյանական արձակի եւ դրամատուրգիայի ինքնօրինակությունը, որն անմիջապես նրան զատում է հազարավոր այլ գրողներից: Ինձ համար Սարոյանը մեծ է նաեւ, որովհետեւ նա իր անձնական խնդիրները, ցավը կարողացել է վերածել բարձրակարգ գրականության: Միշտ չէ, որ հաջողվում է վեր կանգնել ինքն իրենից եւ սեփական ապրածը, զգացածը օտարման էֆեկտով վերակերտել բարձր արվեստի: Սարոյանի ինքնության հայկական կողմը ավելի ու ավելի վառ է դրսեւորվել 50-60-ականներից ի վեր գրված գործերում, որոնք հիմնականում խոհափիլիսոփայական, էսսեիստական բնույթ ունեն՝ ինքնակենսագրական դրոշմով: Կուզենայի, որ այս կարեւորագույն տեղաշարժը, դարձն ի շրջանս յուր մեզանում գիտակցվեր, դառնար այն հիմնավոր պատճառներից մեկը, թե ինչու պիտի Սարոյանի ժառանգությունը հայերեն ունենանք: Թե չէ պարադոքս է. այսօր մենք չունենք նրա առավել հայկական գործերի թարգմանությունները:

- Ինչպե՞ս եք պատկերացնում Սարոյանի չթարգմանված գործերի ճակատագիրը:

- Այսօրվա անտարբերության ֆոնին չեմ պատկերացնում: Մինչդեռ դա լուրջ մոտեցման կարոտ գործ է, առանց չափազանցության՝ պետական, համազգային կարեւորություն ունեցող խնդիր: Մեր հարեւանները ուրիշների ունեցածն են սեփականում, իսկ մենք մեր գանձերին էլ տեր չենք կանգնում: Ունենալ նման մեծության գրող եւ չյուրացնել նրա ժառանգությունը, սեփական գիտակցության, մտածողության, գրականության փաստ չդարձնել. սա արդեն հանցագործ անտարբերություն է, որ խոր մտահոգության տեղիք պիտի տա: Բայց ես չեմ տեսնում ոչ մտահոգություն, ոչ էլ տարրական հետաքրքրություն Սարոյանի անձի, գործի հանդեպ: Ուստի չեմ ուզում անմիտ լավատեսությամբ ինչ-որ կանխատեսումներ անել: Բայց կուզենայի՝ անտեղյակներն ու անտարբերները իմանան, որ Սարոյան կոչվող օվկիանոսից մենք բավարարվել ենք մի կաթիլ Սարոյանով:

- Սարոյանի ամենաբնորոշ հատկանիշը բարությո՞ւնն է:

- Սարոյանի անվան հոմանիշ է դարձել «բարի հսկան»: Իբր նրա ամբողջ գրականությունն ուղղակի շաղախված է այդ միագիծ բարությամբ: Որքան էլ դա արժեքավոր հատկանիշ է, կարեւոր կատեգորիա, բայց անընդունելի է Սարոյանին մեն մի հատկանիշի հանգեցնելը, նրա ստեղծագործության, անձի պարզունակացումը: Սարոյանը որքան հրեշտակ է, այնքան էլ՝ դեւ: Նա մի ամբողջ միկրոկոսմոս է, «զուգահեռ աշխարհ», որտեղից մի հատկանիշ դուրս բերել, նշանակում է պարզապես նրա ստեղծագործությունից, սարոյանական գրքից մեն-մի թել քաշել: Նման մոտեցումն առաջացել է խորհրդային տարիների գրականագիտական տրաֆարետներից եւ այն տխուր փաստից, որ Սարոյանի երկերի շատ կարեւոր, նշանակալից մասը թարգմանված չէ, եւ նրա մասին դատում են միայն հայերեն թարգմանված ինչ-ինչ գործերով: Բայց նույնիսկ դրանց հիման վրա ամեն ինչ բերել, հանգեցնել այդքան պարզունակ հավասարման՝ նշանակում է ընդհանրապես Սարոյան չհասկանալ: Իմ կարդացած ամենածանր, դաժան գրքերից մեկը «The Laughing Matter»-ն է («Այ թեզ ծիծաղելի բան»), որը հայերեն թարգմանված չէ (Ն. Գոնչարի ռուսերեն թարգմանությունը կա՝ "Что-то смешное"): Վիպակի վերնագիրը պարադոքսալ հակասության մեջ է բովանդակության հետ: Միայն այս գործը բավական է Սարոյանի անվանն ամրագրված կլիշեն փշրելու համար: Ինչքա՞ն պիտի երեւակայությունից զուրկ լինել նման նրբին զգացողությունների տեր մարդու, արտասովոր գրողի մասին այդքան ծեծված ընդհանրացում անելու համար: Ցիծաղելի է, եթե ողբալի չլիներ:

- Վերջին անգամ ե՞րբ եք դիմել Սարոյանին:

- Երբ դեռ Սարոյան չէի թարգմանել, նա իմ առօրյայի մի մասն էր: Բայց թարգմանելուց հետո հայերեն Սարոյանին կորցրի. սկսեցի նայել զուտ թարգմանչի աչքերով, ընթերցողի վայելքը չքացավ: Վերջին տարիների հրատարակումներից ծանոթ եմ Սամվել Մկրտչյանի թարգմանություններին եւ Հրանտ Մաթեւոսյանի նախաձեռնությամբ ստեղծված ժողովածուին: Խմբագրական առումով վերջին գիրքը թերություններ ունի: Թարգմանությունների մակարդակն էլ շատ տարբեր է, իսկ դա վնասում է Սարոյանի կերտվածքին. գիրքն սկզբից մինչեւ վերջ կարդացողը, ի վերջո, չի հասկանա, թե Սարոյանն ինչ գրող է, ինչ լեզվով է գրել, որն է իսկական Սարոյանը, եւ որն է նրա իսկական դեմքը: Ամեն դեպքում, ուրախալի փաստ է, որ այդ գրքերը լույս են տեսել: Իսկ իմ թարգմանությունները չեմ կարողանում կարդալ. անընդհատ մտածում եմ, որ կարող էի ամեն ինչ ավելի լավ անել: Եվ իրոք, Սարոյան այսօր ավելի լավ կթարգմանեի, որովհետեւ ավելի հասուն մարդ եմ, եւ փորձառությունս էլ աղարդյուն չի անցել: Ժամանակ էր պետք թարգմանության տառապանքը մոռացության տալու եւ ամեն ինչ անցյալի կարոտալի շողարով տեսնելու համար:

Հարցազրույցը վարեցին
ՆԱՐԻՆԵ ԳԻԺԼԱՔՅԱՆԸ ԵՎ
ՌՈԲ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

«Փունջ» եւ «Գիսանե» պարային խմբերի ելույթներն արտերկրում

Նոյեմբերին Հայկական մանկապատանեկան մշակութային միությունն ավարտեց այս տարվա միջոցառումների ծրագիրը՝ այս անգամ հնարավորություն ստեղծելով «Փունջ» (գեղարվեստական ղեկավար՝ Ասոն Սարգսյան) եւ «Գիսանե» (գեղարվեստական ղեկավար՝ Գեւորգ Ալեքսանյան) մանկապատանեկան պարային խմբերին հանդես գալ Ֆրանսիայում եւ Իտալիայում:

Հոկտեմբերի 24-ին խմբերի առաջին ելույթը տեղի ունեցավ Ֆրանսիայի Վալանս քաղաքում, որտեղ տեղի հայ համայնքը մեծ ջերմությամբ ընդունեց հայ պատանիներին: Համերգը կազմակերպել էր «Հայաստան» մշակութային միությունը (նախագահ՝ Գրիգոր Ամիրզայան, փոխնախագահ՝ Վարդան Բերտիզյան): Դահլիճում հավաքված թե՛ հայերը, թե՛ ֆրանսիացիները բարձր գնահատեցին հայ երեխաների ելույթները նշելով, որ երեխաները ոչ միայն յուրացրել են հայկական պարարվեստի նրբությունները, այլեւ վարպետորեն կարողանում են ներկայացնել հանդիսատեսին: Երեխաները նույնպես ոգեւորված էին իրենց ելույթով, եւ հաջորդ համերգին, որ նշանակված էր Գրենոբլ քաղաքում, ավելի ոգեշնչված ելույթ ունեցան: Համերգը կազմակերպել էին Հայ մշակույթի տունը (նախագահ՝ Ալբերտ Քալաջյան, փոխնախագահ՝ Ժան Ֆորեսիյե, տնօրեն՝ Ասոն Հակոբյան), Կաթոլիս խաչը (ներկայացուցիչ՝ Նիկոլ Սափանջյան), Ֆրանսիա-Ռուսաստան եւ ԱՊՀ երկրների ընկերակցությունը (նախագահ՝ Անտուան Սեգյուրա): Հայերից բացի, ներկա էին շատ ֆրանսիացիներ, այդ թվում նաեւ Իզերի գերագույն խորհրդի նախագահի եւ Գրենոբլի քաղաքապետի ներկայացուցիչ Քրիստին Քրիֆոն:

«Թե՛ «Փունջը» եւ թե՛ «Գիսանեն» իրոք արժանի են գովեստի խոսքերի», նշվեց հատուկ համերգից հետո: «Նրանք ջանք չխնայեցին հայկական հարուստ մշակույթը պատշաճ ներկայացնելու: Մենք ուրախ ենք եւ երախտապարտ, որ Հայկական մանկապատանեկան մշակութային միությունը՝ Վ. Վարդանյանի գլխավորությամբ կարողանում է այս դժվարին պայմաններում կազմակերպել նման միջոցառումներ, եւ հայ պատանիներին հնարավորություն է տրվում ոչ միայն շրջագայելու ու ծանոթանալու եվրոպական երկրների մշակութային արժեքներին, այլեւ արժանապատվորեն ներկայացնելու հայ մշակույթը»:

Հոկտեմբերի 26-ին խմբերը ելույթ ունեցան Նիցցա քաղաքում, որտեղ արդեն մի քանի տարի ոչ մի մանկապատանեկան խումբ ելույթ չէր ունեցել: Այդ էր պատճառը, որ խմբերին անհամբեր էին սպասում: Ընդունելությունն ու համերգը կազմակերպել էին Հայկական մշակութային միությունը (ատենապետուհի՝ Սիդա Տանիկյան, Մագի Բոսնակյան), Կասպար Կայաջյանը եւ Պարսամյան դպրոցը (նախագահ՝ Գրիգոր Աժդերանյան): Ելույթը, որ տեղի ունեցավ Պարսամյան դպրոցի նախասրահում, շատ ջերմ ընդունեցին ներկաները:

Դեկտեմբերի 27-ին խմբերը հյուրընկալվեցին Իտալիայում՝ Միլանի Հայ տանը (ատենապետուհի՝ Կեկել Խաչատուրյան): Միլանի Հայոց միությունը երկար տարիներ ցանկացել էր կազմակերպել միջոցառում հայ պատանիների մասնակցությամբ, սակայն ինչ-ինչ պատճառներով հետաձգվել էր: Միլանի փոքրաթիվ հայ համայնքը շատ լավ էր կազմակերպել խմբերի ընդունելությունը: Այստեղ երեխաների ելույթներն ավելի անմիջական էին, եւ ավելի ջերմ էր կապը հանդիսատեսի հետ: Երեխաները հաջորդ օրը Կեկել Խաչատուրյանի ուղեկցությամբ շրջեցին Միլանի տեսարժան վայրերում՝ Սան Սիրո մարգարաշտում եւ «Լա Սկալա» օպերային թատրոնում:

Երեխաների ելույթներն ամենուրեք բարձր գնահատեցին ընդունող կազմակերպությունները եւ հանդիսատեսը: Արդյունքը՝ ինչպես «Փունջ» եւ «Գիսանե» խմբերին, այնպես էլ ՀՄՄ միությանը կազմակերպիչների տված դիպլոմներն էին:

Բացի ելույթներից, խմբերը ծանոթացան ֆրանսիական եւ իտալական մշակույթներին, եղան այդ երկրների տեսարժան վայրերում, ինչպես նաեւ անկրկնելի Սուրբ Ղազար կղզում, որտեղ նրանց ընդունեցին Մխիթարյան միաբանության հայրերը:

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՄՄՄ նախագահ

«World Soccer»-ի դափնեկիրները

Պավել Նեդվեդ:

Ավանդույթի համաձայն, «World Soccer» ֆուտբոլային հանրահայտ ամսագիրն իր ընթերցողների շրջանում անցկացվող հարցման արդյունքներով որոշում է աշխարհում տարվա լավագույն ֆուտբոլիստին, մարզչին եւ թիմին: Աշխարհի լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել իտալական «Յուվենտուսի» եւ Չեխիայի հավաքականի կիսապաշտպան Պավել Նեդվեդը: Նրա օգտին իրենց ձայնն են տվել հարցման մասնակիցների 35,9 տոկոսը: Նեդվեդը բացահայտ առավելության է հասել իր գլխավոր մրցակիցներ «Մանչեսթր յունայթեդի» եւ Հոլանդիայի հավաքականի հարձակվող Ռուդ վան Նիստելրոյի (ձայների 9,5 տոկոս) եւ Մադրիդի «Ռեալի» ու Իսպանիայի հավաքականի ռմբարկու Ռաուլի (9,1 տոկոս) նկատմամբ: Ստացած ձայների քանակով լավագույն տասնյակում տեղ են գրավել նաեւ Պաոլո Մալդինին («Միլան»՝ 8,2 տոկոս), Յերի Անրին («Արսենալ»՝ 6,1), Ռոնալդոն («Ռեալ»՝ 4,3), Ռոյ Մաքայը («Բավարիա»՝ 4), Անդրեյ Շեւչենկոն («Միլան»՝ 2,8), Ռոբերտո Կառլոսը («Ռեալ»՝ 2,6) եւ Դեւիդ Բեքհեմը («Ռեալ»՝ 2,1): Ի դեմ, ինչպես հայտնի է դարձել իտալական «Gazzetta delo Sport» թերթի թղթակիցներին, Պավել Նեդվեդը հաղթող է ճանաչվել նաեւ Եվրոպայի լավագույն ֆուտբոլիստի կոչման համար «Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթի ամենամյա հարցման արդյունքներով: Շաբաթաթերթը հարցման պատշաճական արդյունքները կհրապարակի դեկտեմբերի 22-ին: Հարկ է նշել, որ Պավել Նեդվեդը «World Soccer»-ի առաջին չեխ դափնեկիրն է: Առավել հաճախ՝ 3 անգամ ամսագրի դափնեկիր է դարձել բրազիլացի Ռոնալդոն:

Հարցման արդյունքներով տարվա լավագույն մարզիչ է ճանաչվել «Միլանի» գլխավոր մարզիչ Կառլո Անչելոտին, որի գլխավորությամբ իտալացիները մայիսին նվաճեցին չեմպիոնների գավաթը: Անչելոտիի օգտին իրենց ձայնն են տվել հարցման մասնակիցների 16 տոկոսը: Լավագույն տասնյակում են Մարչելո Լիպին («Յուվենտուս»՝ 11,4 տոկոս), Ժոզե Մուրինյոն («Պորտո»՝ 10,9), Ալեխս Ֆերգյուսոնը (Մանչեսթր յունայթեդ»՝ 7,5), Մարտին Օ՛Նիլը («Սելթիկ»՝ 6), Կառլոս Բիանկին («Բոկա Խունիորս»՝ 5,4), Ռոնալդ Դենյուիֆսը («Ռեալ Սոսյեդադ»՝ 4,1), Վիսենտե դել Բոսկեն («Ռեալ»՝ 3), Ժակ Սանտինին (Ֆրանսիա՝ 2,8), Ֆելիխ Մագատը («Շտուտգարտ»՝ 2,2):

Աշխարհի լավագույն թիմ է ճանաչվել չեմպիոններ դարձած «Միլանը» (23,4 տոկոս): Լավագույն տասնյակում են «Յուվենտուսը» (13,8), «Ռեալը» (10,5), «Բոկա Խունիորսը» (7,5), «Պորտոն» (5,6), Չեխիայի հավաքականը (5,2), Ֆրանսիայի հավաքականը (4,9), «Ռեալ Սոսյեդադը» (3,9), «Սելթիկը» (2,2), «Շտուտգարտը» (1,7):

Ներկայացնում ենք «World Soccer»-ի բոլոր դափնեկիրներին:

Լավագույն ֆուտբոլիստները

Թվ.	Ֆուտբոլիստը	Երկիրը	Ակումբը
1982	Պաոլո Ռոսի	Իտալիա	«Յուվենտուս»
1983	Զիկո	Բրազիլիա	«Ուդինեզե»
1984	Միշել Պլատինի	Ֆրանսիա	«Յուվենտուս»
1985	Միշել Պլատինի	Ֆրանսիա	«Յուվենտուս»
1986	Դիեգո Մարադոնա	Արգենտինա	«Նապոլի»
1987	Ռուդ Գուլիտ	Հոլանդիա	«Միլան»
1988	Մարկո վան Բաստեն	Հոլանդիա	«Միլան»
1989	Ռուդ Գուլիտ	Հոլանդիա	«Միլան»
1990	Լոթար Մաթեուս	Գերմանիա	«Ինտեր»
1991	ժան Պիեռ Պապեն	Ֆրանսիա	«Մարսել»
1992	Մարկո վան Բաստեն	Հոլանդիա	«Միլան»
1993	Ռոբերտո Բաջիո	Իտալիա	«Յուվենտուս»
1994	Պաոլո Մալդինի	Իտալիա	«Միլան»
1995	Ջանլուկա Վիալի	Իտալիա	«Յուվենտուս»
1996	Ռոնալդո	Բրազիլիա	«Բարսելոնա»
1997	Ռոնալդո	Բրազիլիա	«Ինտեր»
1998	Զինեդին Զիդան	Ֆրանսիա	«Յուվենտուս»
1999	Ռիվալդո	Բրազիլիա	«Բարսելոնա»
2000	Լուիս Ֆիգու	Պորտուգալիա	«Ռեալ»
2001	Մայքլ Օուեն	Անգլիա	«Լիվերպուլ»
2002	Ռոնալդո	Բրազիլիա	«Ռեալ»
2003	Պավել Նեդվեդ	Չեխիա	«Յուվենտուս»

Լավագույն մարզիչները

1982 թ.	Էնցո Բեարզոտ (Իտալիա)
1983 թ.	Զեմ Պիոնտեկ (Դանիա)
1984 թ.	Միշել Իդալգո (Ֆրանսիա)
1985 թ.	Տերի Վենեյբլս («Բարսելոնա»)
1986 թ.	Գի Տիս (Բելգիա)
1987 թ.	Յոհան Կրուիֆ («Այաքս»)
1988 թ.	Ռինուս Միխելս (Հոլանդիա, «Բայեր»)
1989 թ.	Արիգո Սակի («Միլան»)
1990 թ.	Ֆրանց Բեկենբաուեր (ԳՖՀ, «Օլիմպիկ»)
1991 թ.	Միշել Պլատինի (Ֆրանսիա)
1992 թ.	Ռիխարդ Մելլեր-Նիլսեն (Դանիա)
1993 թ.	Ալեխս Ֆերգյուսոն («Մանչեսթր յունայթեդ»)
1994 թ.	Կառլոս Ալբերտո Պերեյրա (Բրազիլիա)
1995 թ.	Լուի վան Գալ («Այաքս»)
1996 թ.	Բերտի Ֆոգտս (Գերմանիա)
1997 թ.	Օսմար Հիցֆելդ («Բորուսիա», Դորտմունդ)
1998 թ.	Արսեն Վենգեր («Արսենալ»)
1999 թ.	Ալեխս Ֆերգյուսոն («Մանչեսթր յունայթեդ»)
2000 թ.	Դինո Զոֆ (Իտալիա)
2001 թ.	ժերար Ուլյե («Լիվերպուլ»)
2002 թ.	Գուս Հիդինկ (Հարավային Կորեա)
2003 թ.	Կառլո Անչելոտի («Միլան»)

Լավագույն թիմերը

1982 թ.	Բրազիլիա
1983 թ.	«Համբուրգ»
1984 թ.	Ֆրանսիա
1985 թ.	«Էվերտոն»
1986 թ.	Արգենտինա
1987 թ.	«Պորտո»
1988 թ.	Հոլանդիա
1989 թ.	«Միլան»
1990 թ.	ԳՖՀ
1991 թ.	Ֆրանսիա
1992 թ.	Դանիա
1993 թ.	«Պարմա»
1994 թ.	«Միլան»
1995 թ.	«Այաքս»
1996 թ.	Նիգերիայի օլիմպիկան հավաքական
1997 թ.	«Բորուսիա» Դորտմունդ
1998 թ.	Ֆրանսիա
1999 թ.	«Մանչեսթր յունայթեդ»
2000 թ.	Ֆրանսիա
2001 թ.	«Լիվերպուլ»
2002 թ.	Բրազիլիա
2003 թ.	«Միլան»

Ժորդանիան մնում է նախնական կալանքի տակ

Ինչպես տեղեկացրել էինք, Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Մերաբ Ժորդանիան 3 ամսով նախնական կալանքի էր վերցվել՝ պետությանը մոտ 350 հազար դոլարի հասնող հարկերը չվճարելու եւ եկամուտները թաքցնելու համար: Ժորդանիայի կողմնակիցները պատրաստվում էին նրան 120 հազար դոլարի գրավի դիմաց ազատել նախնական կալանքից: Սակայն Թբիլիսիի մարզային դատարանն ուժի մեջ է թողել Ժորդանիային երեքամսյա նախնական կալանքի վերցնելու նախկին որոշումը: Պատճառն այն է, որ Վրաստանի դատախազությանը հաջողվել է պարզել, որ ցվեյցարական բանկերից մեկում Ժորդանիան պետությունից թաքցրել է 4 մլն դոլար:

Հոնդուրասցի ֆուտբոլիստները դադարեցրին հացադուլը

Ինչպես տեղեկացրել էինք Հոնդուրասի «Ռեալ պատեղլումա» թիմի ֆուտբոլիստներն ի նշան բողոքի հացադուլ էին հայտարարել՝ պահանջելով իրենց չորս ամսվա աշխատավարձը: Ակումբն ընդհանուր առմամբ ֆուտբոլիստներին 42 հազար դոլար էր պարտք: Եվ ահա, 8-օրյա հացադուլից հետո ֆուտբոլիստները վերադարձան իրենց տները: Հոնդուրասի ֆուտբոլի լիգայի ղեկավարությունը խոստացել է նրանց 17 հազար դոլար վճարել, իսկ մնացած գումարն ակումբը մատիր է հայթայթել զրահամեքենայի վաճառքից: Այդ զրահամեքենան ակումբի առնչությամբ հաջողությանը թիմի մասնակցության երաշխիք, ներկայացրել էր ֆուտբոլային լիգայի ղեկավարությանը:

Բոսնիչը կընդգրկվի «Շեֆիլդում»

Ավստրալացի դարպասապահ Մարկ Բոսնիչը, որը կոկաինի օգտագործման համար որակազրկվել էր 9 ամսով, ֆուտբոլային իր գործունեությունը կշարունակի Անգլիայի առաջին դիվիզիոնում հանդես եկող «Շեֆիլդ յունայթեդ» թիմում: Բոսնիչի որակազրկման ժամկետը լրանում է դեկտեմբերին եւ արդեն հունվարին նա կարող է պաշտպանել անգլիական թիմի դարպասը, որը պայքարում է պրեմիեր-լիգայի ուղեգրի համար: Որակազրկման ընթացքում մարզավիճակը պահպանելու նպատակով Բոսնիչը մարզվում էր անգլիական «Պորտսմուտում»: «Շեֆիլդ յունայթեդը» ներկայումս բարձրակարգ դարպասապահի կարիք ունի: Թիմի հիմնական դարպասապահ Պադի Քենին մինչեւ մրցաշրջանի ավարտը շարքից դուրս է եկել, ուստի ակումբի ղեկավարությունը վճռեց օգտվել Ավստրալիայի 20-րդ դարի լավագույն ֆուտբոլիստի ծառայություններից:

ՆԱՐԴԻ

Նարդիստներն ավարտեցին մրցավեճը

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատիստի կենտրոնական տանն անցկացվեց նարդու Հայաստանի հերթական առաջնությունը: Նարդիստների տարեվերջյան այդ մրցաշարում հանդես եկան շուրջ 80 մասնակիցներ: Մրցումներն անցկացվեցին երկու խաղածեւից՝ կարճ եւ երկար: Կարճ մրցածեւում անցկացվեցին նաեւ թիմային մրցումներ:

Առաջնության պարգեւների համար բավական համառ ու անզիջում մրցապայքար ծավալվեց: Երկար խաղածեւում իր՝ վարպետ խաղով աչքի ընկավ Գուրգեն Մխիթարյանը, որը եզրափակիչում պարտության մատնելով Խաչիկ Մելիքյանին, առաջին անգամ հռչակվեց հանրապետության չեմպիոն: Գուրգեն Մխիթարյանը ՀՀ առաջնություններում մինչ այդ գրավել էր 2-րդ տեղը: Նույնպիսի արդյունք էր ցույց տվել նաեւ գավաթի խաղարկությունում: Մրցանակային եռյակը եզրափակեց Գագիկ Սարգսյանը:

Կարճ խաղածեւից լավագույնը ճանաչվեց Միհր Մելքոնյանը: 2-րդ եւ 3-րդ տեղերը գրաւեցին Արշակ Թադեւոսյանն ու Ժորա Շուխյանը: Թիմային մրցումներին մասնակցած 14 թիմերի մրցավեճում ուժեղագույն ճանաչվեց «Հույսը»: Այդ հաղթանակում իրենց ներդրումն ունեցան Սիրաժ Ղամբարյանը, Ստեփան Ղազարյանը, Սերգեյ Դրմոյանը: 2-րդ տեղը գրավեց «Շանսը», 3-րդը «Սանուշակն» էր: Առաջնության մրցանակակիրներին մրցանակներ հանձնեցին հովանավորները:

Ընտրական խմբերի կազմը հայտնի է

Սերբիայում եւ Չեռնոգորիայում կայացավ բասկետբոլի 2005 թ. Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի վիճակահանությունը: Տղամարդկանց մրցաշարում եզրափակիչի ուղեգրերը վիճարկող հավաքականները բաժանվել են 5 խմբի: Ահա խմբերի կազմերը.

«A» խումբ. Խորվաթիա, Շվեդիա, Ռուսաստան,

«B» խումբ. Բուլղարիա, Լատվիա, Իսրայել, Պորտուգալիա,

«C» խումբ. Հունգարիա, Ուկրաինա, Գերմանիա, Բելգիա,

«D» խումբ. Չեխիա, Սլովենիա, Ֆրանսիա, Լեհաստան,

«E» խումբ. Էստոնիա, Բոսնիա, Թուրքիա, Հոլանդիա:

Խմբերում հաջողության հասած 2 լավագույն թիմերը ուղեգիր կնվաճեն: Մնացած 9 հավաքականները կվիճարկեն միակ ուղեգիրը լրացուցիչ ընտրական մրցաշարում, որը կանցկացվի 2005 թ. օգոստոս-սեպտեմբերին: Նշենք, որ Հունաստանի, Սերբիայի եւ Չեռնոգորիայի, Լիտվայի, Իսպանիայի եւ Իտալիայի հավաքականներն ավելի վաղ արդեն նվաճել են եզրափակիչում հանդես գալու իրավունքը: Եվրոպայի առաջնությունը կանցկացվի 2005 թ. սեպտեմբերին Սերբիայի եւ Չեռնոգորիայի մի քանի քաղաքներում: Կանանց ընտրական մրցաշարի խմբերի կազմն այսպիսին է.

«A» խումբ. Լիտվա, Հունգարիա, Ֆրանսիա, Իտալիա,

«B» խումբ. Լատվիա, Ուկրաինա, Սլովակիա, Խորվաթիա,

«C» խումբ. Ռումինիա, Իսրայել, Բելգիա, Գերմանիա,

«D» խումբ. Բուլղարիա, Սերբիա եւ Չեռնոգորիա, Լեհաստան, Ֆինլանդիա:

Ռուսաստանի ընտրանին որպես եվրոպայի չեմպիոն, ազատված է ընտրական հանդիպումներից:

Տյուիքը հրաժարվել է օլիմպիադային մասնակցելուց

Օլիմպիական խաղերին մասնակցելն, առավել եւս մրցանակակիր դառնալը, յուրաքանչյուր մարզիկի նվիրական երազանքն է: Իսկ ահա թենիսիստներն այս առումով բացառություն են կազմում: Նրանցից շատերը հրաժարվում են օլիմպիական խաղերին մասնակցելուց նախընտրելով հանդես գալ խոշոր մրցաշարերում, որտեղ բավական մեծ մրցանակային գումարներ են խաղարկվում: Բացի նշված հանգամանքից, Աթենքի օլիմպիադայում եւս մեկ խանգարիչ պահ գոյություն ունի: Բանն այն է, որ թենիսի օլիմպիական մրցաշարը վերջնագիծը հասելու է 2004 թ. օգոստոսի 22-ին, իսկ մեկ շաբաթ անց ԱՄՆ-ում մեկնարկելու է այդ երկրի թենիսի բաց առաջնությունը, որը մտնում է «Մեծ սաղավարտ» մրցանակի շարքի մեջ: Իսկ թենիսիստներից շատերի համար «Մեծ սաղավարտի» շարքին պատկանող մրցաշարերի մասնակցությունը տարվա գլխավոր իրադարձությունն է:

Աթենքի օլիմպիական խաղերի մասնակցությունից հրաժարվել է ավստրալացի ուժեղագույն թենիսիստներից մեկը՝ Լլեյթոն Հյուիթը: Նա նշել է, որ օլիմպիական մրցաշարը կխանգարի ինչպես հարկն է նախապատրաստվել ԱՄՆ-ի բաց առաջնությանը: Իսկ Հյուիթն իր առջեւ նպատակ է դրել հաղթող ճանաչվել «Մեծ սաղավարտի» չորս մրցաշարերից որեւէ մեկում: Նման իրավիճակ էր ստեղծվել նաեւ 1998 թ. Ատլանտայի օլիմպիադայից առաջ, երբ կրկին փիչ ժամանակ էր մնացել ԱՄՆ-ի բաց առաջնությանը նախապատրաստվելու համար, ուստի ուժեղագույն թենիսիստներից շատերը հրաժարվել էին օլիմպիական խաղերին մասնակցելուց:

Աբրամովիչը ճանաչվել է «Տարվա մարդ»

Ռուսաստանցի հայտնի գործարար, Չուկոտկայի նահանգապետ, Լոնդոնի «Չելսիի» սեփականատեր Ռոման Աբրամովիչը բրիտանական «Evening Standard» թերթի անցկացրած հարցման արդյունքներով ճանաչվել է «Տարվա մարդ»: Հարցման մասնակիցների մեկ քառորդն իր ձայնը տվել էր Աբրամովիչի օգտին: Նրանց կարծիքով, «Չելսիի» սեփականատերը, որն ավելի քան 100 մլն ֆունտ ստեռլինգ է ծախսել թիմի կազմն ուժեղացնելու եւ մրցունակ թիմ ստեղծելու համար, մրցանակի մյուս հավակնորդներից առավել մեծ տպավորություն է թողել Լոնդոնում:

Օրվա հետքերով

Հայ-վրացական սահմանն անցնում էր Սեւանա լճի հյուսիսային ափերով

Այսպես են սովորեցնում Վրաստանի դպրոցներում

Թբիլիսիի «Արտանուջի» հրատարակչությունը 2003 թ. հայերենով հրատարակել է «Վրաստանի պատմություն» երկհատոր դասագիրքը Վրաստանի հայկական դպրոցների 10-րդ եւ 11-րդ դասարանների աշակերտների համար: Դասագրքերը թույլատրված են Վրաստանի կրթության նախարարության կողմից:

Դասագրքի հեղինակներ Մերաբ Վայնածեն, Վախթանգ Գուրուլին եւ Միխեիլ Բախտաձեն, հաշվի առնելով հայ-վրացական հարաբերություններում պատմական մի շարք զգայուն հարցերը, առավել եւս՝ հաշվի առնելով, որ այդ դասագրքերով սովորում են ազգությամբ հայ երեխաները, փորձել են հնարավորինս անաչառ լինել, երբեմն շրջանցելով դրանք:

Մեկ հարցում վրաց պատմագրությունը անզուսպ է եղել. հայ-վրացական սահմանն իբր անցել է Սեւանա լճի հյուսիսային ափերով, այսինքն Տաշիրը, Լոռին (վրացական աղբյուրների Գոգարենեն, հայկական աղբյուրների Գուգարքը), Ուտիքը, Գեղարքունիքի մի մասը բնիկ վրացական հողեր են: Դասագրքերում տպագրված վեց քարտեզներից հինգում նշվում է, որ սահմանն անցնում է Սեւանա լճի հյուսիսային ափերով, ընդ որում երեք դեպքում Սեւանի համար օգտագործվում է վրացականացված կամ մուսուլմանական տարբերակ՝ «Գելամունիս ծբա», «Գոգչիս ծբա»:

Հայ-վրացական վիճահարույց խնդիրներում դասագրքի հեղինակները զուսպ են գտնվել: Այսպես, 608 թ. տեղի ունեցած եկեղեցական պառակտումը հայերի եւ վրացիների միջեւ ներկայացվում է հետեւյալ կերպ. «Այն ժամանակ, երբ Քարթլիում եւ Բյուզանդիայում հաղթանակեց երկաբնակությունը, Հայաստանի եկեղեցին պաշտպանեց միաբնակությունը: 7-րդ դարի սկզբներին բավականին սրվեցին հարաբերությունները Վրաստանի եւ Հայաստանի եկեղեցու միջեւ: 608թ. հայոց կաթողիկոս Աբրահամը հրաժարակեց հատուկ կոնդակ, որով էլ վերջնականապես խզվեցին Վրաստանի եւ Հայաստանի եկեղեցական կապերը»: Մինչդեռ Վրաստանում վերջին տարիներին լույս տեսնող պատմական աշխատություններում հայ-վրացական եկեղեցական վեճերը ներկայացվում են որպես Հայ առաքելական եկեղեցու ոտնձգություններ, բռնություններ վրաց ուղղափառ եկեղեցու նկատմամբ:

1918 թ. դեկտեմբերի երկրաբաթյա վրաց-հայկական պատերազմի մասին գրված է. «1918 թ. դեկտեմբերին տարածային տարաձայնությունների հիման վրա ռազմական ընդհարումներ եղան Վրաստանի ժողովրդավարական Հանրապետության եւ Հայաստանի միջեւ, որոնք, բարեբախտաբար, կարճ ժամանակամիջոցում կարգավորվեցին»: Նկատենք, որ գիրքը գրված է անգրագետ հայերենով:

Թ. Հ.

Թբիլիսիի 47 քաղաքագլուխներից 45-ը հայ

ԵՐԵՎԱՆ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: Թբիլիսիում շուրջ 800 տարիների ընթացքում պաշտոնավարած 47 քաղաքագլուխների կենսագրական տվյալները, ինչպես նաեւ նրանց պաշտոնավարության շրջանները լուսաբանող նյութեր են ներկայացված Սամվել Կարապետյանի հեղինակած «Թիֆլիսի քաղաքագլուխները» գրքում, որի շնորհանդեսը կայացավ դեկտեմբերի 18-ին Հայաստանի Ազգային գրադարանում:

Ըստ Սամվել Կարապետյանի, ուշագրավ եւ հատկանշական է քաղաքագլուխներից 45-ի ազգությամբ հայ լինելու հանգամանքը: 19-րդ դարի Թբիլիսին կառուցվել է հայ քաղաքագլուխների գլխավորությամբ, ինչպիսիք են Ալեքսանդր Խաչիսյանցը, Գեւորգ Էվանգուլյանցը, Անտոն Ղորղանյանցը, Մելիք Սահակ Շերգիլյանցը, Ալեքսանդր Մաշինյանցը եւ այլք: Նրանց շնորհիվ ծաւավորվել է Թիֆլիսի քաղաքաշինությունն ու ճարտարապետությունը: «Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսին, որ Անդրկովկասի հնագույն ու խոշոր քաղաքներից է, իր պատմության շուրջ մեկ հազարամյակում կառավարվել է իրար հաջորդած ու քաղաքին անհունորեն նվիրված այնպիսի քաղաքագլուխներով, որ նման գործիչների գոյությունն իրավամբ բարեբախտություն կարող էր համարվել որեւէ քաղաքի համար»,- նշեց գրքի հեղինակը:

«Սերունդներս, որ վայելում ու հպարտանում ենք անցյալում արարված արժեքներով, պարտավորված ենք ճանաչել այդ արժեքների հեղինակներին: Տփղիս (Թիֆլիս, Թբիլիսի) քաղաքը կերտող առաջին դեմքերին՝ քաղաքագլուխներին ճանաչելը, նրանց մասնակցությունների ու ճակատագրին տեղյակ լինելը նրանց հիշատակին հարգանքի մի յուրատեսակ դրսեւորում է», ընդգծեց Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանը:

Աշխատությունը հրատարակվել է նաեւ ռուսերեն եւ անգլերեն լեզուներով:

ՀԱՅԱՍՏԱՆ

Տարեց ադրբեջանցին կախվել է չցանկանալով ապրել առանց Հեյդար Ալիեւի

ԲԱՔՈՒ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: «Իմ մահվան հարցում խնդրում եմ ոչ ոքի չմեղադրել: Ես չեմ կարող ապրել այն բանից հետո, երբ մահացել է Հեյդար Ալիեւը»: Ինչպես հաղորդում է «Ռեգնում» գործակալությունը, այս բառերը վերցված են Իմիշլի քաղաքի բնակիչ 65-ամյա Ազիզ Գուրբանովի մահից առաջ գրած տողերից, որը կախվել է Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիեւի թաղումից հետո: Նրա որդի Գյուլաղա Գուրբանովն ասել է, որ «այնպիսի ականավոր մարդու մահից հետո, ինչպիսին Հեյդար Ալիեւն է, հորս համար կյանքը կորցրել էր ամեն իմաստ, եւ նա կախվեց դեկտեմբերի 15-ին, Հեյդար Ալիեւի թաղումից հետո»:

Շեւարդնաձեն իր հաշվին Հ. Ալիեւի հուշարձան կկանգնեցնի

ԲԱՔՈՒ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: Վրաստանի նախկին նախագահ Էդուարդ Շեւարդնաձեն Ադրբեջանի լրատվամիջոցներին տված հարցազրույցի ժամանակ հայտարարել է իր ընկեր, Ադրբեջանի նախկին նախագահ Հեյդար Ալիեւին Թբիլիսիում հուշարձան կանգնեցնելու մտադրության մասին: «Էմ Փի Էյ»-ի տեղեկություններով, Շեւարդնաձեն այդ առաջարկը կներկայացնի վրաց խորհրդարանին եւ իշխանությունների մերժման դեպքում հուշարձանը կկառուցի իր միջոցներով:

Նավթի գինը բարձրացել է ռեկորդային մակարդակի

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 18 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊՈՒՆ: Նյու Յորքի ապրանքային բորսայի էլեկտրոնային սակարկությունների համակարգում նավթի գինը բարձրացել է ռեկորդային բարձր մակարդակի Իրաքի պատերազմն սկսվելուց ի վեր: Հինգշաբթի նավթի գինը բարձրացել է 1,3%-ով՝ հասնելով մինչեւ մեկ բարելը 33,78 դոլարի: Նախօրեին նավթի գների աճը կազմել էր 1,4%՝ 33,35 դոլար: «Բլումբերգ» գործակալության համաձայն, աճը կապված է այն հաղորդումների հետ, որ նավթի ԱՄՆ-ի պաշարները անցած տարվա համեմատությամբ նվազել են 4,9%-ով: Բացի այդ, ինչպես հայտնել է «Միցուբիշի» ընկերության ներկայացուցիչ Էնտոնի Նունանը, նավթի գնի աճը կապված է նաեւ Մերձավոր Արեւելքում նավթային օբյեկտների վրա նոր հարձակումների հնարավորության հետ:

ՀՀ Կենտրոնական բանկը 17.12.2003 թ. ժ. 9:00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	565.21	559.60	570.90
EUR	1	եվրո	701.03	696.80	705.20
RUR	1	ռուս. ռուբլի	19.33	18.20	20.50

Microsoft CERTIFIED Partner

Microsoft CERTIFIED Technical Education Center

VUE

@rmineo Global Telecommunications

VUE տեսային կենտրոնն առաջարկում է հանձնել Microsoft, CIW, Cisco Systems եւ այլ ֆիրմաների տրամադրած քննություններ եւ ստանալ համապատասխան վկայական: Մանրամասն տեղեկությունների համար դիմել՝ Փ. Բյուզանդի 1/3, 7-րդ հարկ

ժամը 10.00-17.30
Հեռ.՝ 582-760

ԱՌԱՎՈՏ ԼՈՒՐԵ՝
ԱՌԱՎՈՏ ԱՇԽԱՐՀ

Ուզո՞ւմ եք ամենավերջին իրադարձություններին եւ օրվա մամուլի հրապարակումներին ծանոթանալ ամենաառաջինը
Ուզո՞ւմ եք լսել բազմակողմանի վերլուծություն եւ անաչառ մեկնաբանություն

Հետեւեք
Հայաստանի Հանրային ռադիոյի
«Ռադիոլուր» եւ «Ռադիոդրեսս»

լրատվական-վերլուծական ծրագրերին ամեն օր՝ ուղիղ եթերում
ժամը 6.00, 8.00, 10.00, 11.00, 12.00, 13.00, 14.00, 15.00 (հայերեն եւ ռուսերեն տարբերակներով), 17.00, 18.00, 22.00, 23.00
«Ռադիոդրեսը»՝ օրվա մամուլի տեսությամբ եթերում է ժամը 9.50-ին եւ 11.45-ին

18.00-ին Հիմնական թողարկումը
Օդերեւութաբանական լրատվություն
Բազմակողմանի վերլուծություն
Անաչառ մեկնաբանություն
Հյուր՝ ուղիղ եթերում
Լրագրողական հետաքննություն
Մամուլի տեսություն՝ «Ռադիոդրեսս»

Մեզ տարբեր ժամերի կարող եք լսել
62, 215, 1282 մետր ալիք, FM 102 եւ FM 107.6,
4,3 մետր ԳԿԱ ռադիոկայաններով, քաղաքային լարային ցանցով.
ինտերնետով. www.armradio.am

For Your Internal News of Armenia Log on to
www.azg.am
In Armenian Russian, and Turkish

вклад Ширакаци
Сила красоты

- 6 месяцев - 9,5% годовых
- от 1000 до 10000 USD или EURO
- досрочное изъятие - до 30 дней – 2,5%, после 30 дней - 3% годовых
- при сумме от 10000 до 50000 USD или EURO – 10% годовых

вклад Маштоц
Величие любви

- 12 месяцев - 10,5% годовых
- от 1000 до 10000 USD или EURO
- ежемесячная капитализация или выплата процентов
- досрочное изъятие - до 30 дней – 2,5%, после 30 дней - 3% годовых
- при сумме от 10000 до 50000 USD или EURO – 11% годовых

СТАНДАРТНЫЕ ВКЛАДЫ В ДРАММАХ И ВАЛЮТЕ

Срок вклада	Выплата процентов	AMD	USD, EURO	
			До 10.000	От 10.001 до 100.000
До востребования		3	2,5	
31 - 90 дней	в конце срока	6,5	7	7,5
	ежемесячно	6	6,5	7
91 - 182 дня	в конце срока	9	8	8,5
	ежемесячно	8	7	7,5
183 - 364 дня	в конце срока	10	9	9,5
	ежемесячно	9	8	8,5
365 дней и более	в конце срока	11	10	10,5
	ежемесячно	10	9	9,5

Вклады превышающие 50 млн. AMD или 100 тыс. USD, EURO - по индивидуальным ставкам
Минимальная сумма срочных депозитов
- 50.000 AMD
- 100 USD, EURO

ЮНИБАНК 53 98 70

АДРЕСА ФИЛИАЛОВ ЗАО "ЮНИБАНК"

- Центральный офис
г. Ереван, ул. Амиряна 12
тел. (3741) 539870, 539871, 534474
e-mail: unibank@unibank.am

- Филиалы в г. Ереване
Филиал "ЕРЕТРОН"
ул. Абовяна 26
тел. (3741) 542431
Филиал "ЛАЛАТИЯ"
ул. Себастия 141
тел. (3741) 776627
Филиал "КОМИТАС"
ул. Комитаса 15/2
тел. (3741) 261838

- Филиалы в Армении
Филиал "ВАНАДЗОР"
г. Ванадзор, ул. Тиграна Меца 53
тел. (37451) 40872
Филиал "ТЮМЕРИ"
г. Гюмри, ул. Ахтанакн 1
тел. (37441) 33055

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 18. 12. 2003 Գինը՝ 100 դրամ